Հարուստներն էլ ավելի են հարստացել, սրա հաշվին տնտեսական աճ է գրանցվել: Ռուսաստանից եկած մեծ քանակի փողերի եւ այլ ֆակտորների հաշվին 2022 թ. ունեինք 12% տնտեսական աճ, բայց միայն թղթի վրա, միջին եւ ցածր եկամուտ ստացող քաղաքացին զգալի տարբերություն չի զգում, որովհետեւ աճը բաժին է ընկել հարուստներին:

Կարդացեք՝ էջ 4

Թմրամոլների տեսակ կա՝ բենզինիստներ, որոնք բենզին են սրսկվում: Թմրամոլության ամենավատ տեսակն է սա, օրգանիզմն ամենաարագն է քայքայվում, եւ մահը շատ շուտ է վրա հասնում, բայց էժան է: Փաշինյանի խմբակը, բենզինիստ լինելով, երկիրը վերածում է բենզինիստի, Հայաստանը նստեցրել է ադրբեջանական բենզինի ասեղի վրա:

Կարդացեք՝ էջ 5

«Բանակի հզորացումը շատ դժվար կլինի: Երեւանն օգնություն է ակնկալում ԵՄ-ից, բայց 20 միլիոն եվրոյի բժշկական վրանները դժվար թե բան փոխեն: Երեւանը բանակցություններ է վարում Հնդկաստանից զենք գնելու շուրջ: Ֆրանսիայից զենքի ակնկալիքը հիասթափություն ապրեց. զենքը կարծես ժամանել է, բայց՝ չնչին քանակի»:

Կարդացեք՝ էջ 6

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 10 (4145), 3 փետրվար, երեքշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am



«Իզմիրլյան» բժշկական կենտրոնում Ծիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոսին հսկող կարգադրիչները վերջապես թույլ են տվել, որ մասնակցի այս կիրակի մատուցված պատարագին: Հիշեցնենք, որ սրբազանը դեռ կալանքի տակ է, սակայն մի քանի շաբաթ է՝ գտնվում է «Իզմիրլյան» կենտրոնում՝ առողջական խնդիրներով պայմանավորված: Նա մի վիրահատություն արդեն տարել է, երկրորդին է պատրաստվում: Անցած շաբաթ այդ նույն մարդիկ, սակայն, թույլ չէին տվել, որ հիվանդանոցում պատարագ մատուցվի, եւ սրբազանը հաղորդություն ստանա, ինչից նա շատ էր զայրացել: Այս կիրակի պատարագը մատուցել է կենտրոնի հոգեւոր տեսուչ Հայր Հովհաննես Թորգոմյանը: Ներկա են եղել բուժանձնակազմից մի քանի հոգի, հարեւան հիվանդասենյակներից որոշ բուժառուներ, Աջապահյանի եղբորորդին՝ Արտաշես սարկավագ Աջապահյանը, որը հորեղբոր խնամակալն է ԲԿ-ում, ինչպես նաեւ՝ սրբազանին այցի գնացած պատգամավոր Տիգրան Աբրահամյանը: Պատարագը մատուցվել է հիվանդանոցի միջանցքում, որին իր պալատից հետեւել է նաեւ սրբազանը, վերջում նաեւ հաղորդություն է ստացել: Մեզ պատմեցին, որ այս անգամ էլ կարգադրիչները փորձել են արգելել սրբազանին՝ պատարագի մասնակցել, հատկապես լսելով, որ պատարագի արարողակարգի մաս է կազմում հաղորդություն ստանալը: Երբ նրանց մանրամասն բացատրել են, որ հաղորդում ստանալը «հաղորդակցվելը» չէ, ինչին նրանք դեմ են եղել, այլ անթթխմոր հացով պատրաստված նշխարը (գինու մեջ թաթախված եւ վրան համապատասխան աղոթք կարդալուց հետո) ճաշակելը հավատացյալների կողմից, մի կերպ համաձայնել են:

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ փետրվարի 24-ին, ժամը 12:00-ին Դիլիջանի համայնքապետարանի նիստերի դահլիճում կկայանա հանրային քննարկում՝ Դիլիջանի նոր թունելի կառուցման աշխատանքների շրջանակում «Բնապահպանական ազդեցության գնահատման» հաշվետվության վերաբերյալ, որը մշակվել է ԱԶԲ-ի պահանջների համաձայն: Ծրագրի պատվիրատուն «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամն է: Նիկոլ Փաշինյանի իշխանությունն անցած գրեթե 8 տարում շինարարական ոչ մի մեծ ծրագիր չի իրականացրել, իրենց խոստացած ակադեմիական քաղաքը, մետրոյի Աջափնյակի կայարանը չի կառուցել, Դիլիջանի ավտոմոբիլային թունելը ո՞նց են կառուցելու:

Ժողովին ինչի՞ ես դեմ

Ո՛չ միջազգային հանրության աչքում հեղինակազրկվելը, ո՛չ հայ հանրության վստահությունը կորցնելը, ո՛չ պատմության մեջ որպես հայակործան իշխանություն մնալու հեռանկարը հետ չի պահում Փաշինյանին իր հակապետական ծրագրերից: Պարզ է, որ սեփական եկեղեցու դեմ պատերազմ հայտարարած ղեկավարին չեն կարող քաղաքակիրթ երկրներում նորմալ վերաբերվել, հայ ժողովուրդն էլ հավանություն չի տալիս եկեղեցին քանդելու, հոգեւորականներին բանտ ուղարկելու քայլերին, իսկ կյանքի գնով Եպիսկոպոսաց ժողովը տապալելու փորձերն ուղղակի մտագարության տպավորություն են թողնում: Սակայն տասնյակ օրենքների ոտնահարումով քրեական վարույթներ են հարուցել Գերագույն հոգեւոր ժողովի անդամների մի մասի նկատմամբ՝ նրանց նկատմամբ, ովքեր պետք է մեկնեին Ավստրիա՝ ժողովին մասնակցելու, եւ փակել են նրանց ՍԷԿՏ-ը՝ ելքի իրավունքը երկրից: Պարզ է, որ սա կոպիտ միջամտություն է անկախ կառույցի՝ Մայր Աթոռի գործառույթներին եւ արվում է ժողովը տապալելու նպատակով: Բայց եկեք հասկանանք, թե ինչու է այդ ժողովն այդքան անհանգստացնում մի մարդու, որը հայտարարել է, թե «Եկեղեցու բարեռորոգման, մաքրման» գործընթացին է ուզում նպաստել, չի ուզում կաթողիկոս փոխել, այլ ուզում է, որ Հայ առաքելական եկեղեցին, գործող հոգեւորականները զղջման, սխալների ուղղման ճանապարհով ինքնամաքրվեն, եւ մեր սուրբ եկեղեցին դառնա անթերի: Եթե իսկապես նման ցանկություն ունենար այս անձը, ապա այդ ինքնամաքրման ճանապարհը հենց Եպիսկոպոսաց ժողովն է: Նա պետք է ուրախ լիներ, որ ողջ աշխարհից եպիսկոպոսները, այդ թվում՝ իր կողմն անցած 10 տիրադավները, հավաքվում են մի դահլիճում, որ քննարկեն իրենց խնդիրները, լուծումներ գտնեն ու առողջացման ուղին բռնեն: Պետք է ոչ թե խանգարեր, այլ՝ աջակցեր դրա կայացմանը:

Մայր Աթոռում մի քանի օր է՝ քննարկումներ են ընթանում. ինչպես անել, որ փետրվարի 16-19-ը Ավստրիայում նշանակված Եպիսկոպոսաց ժողովը չխափանվի, ինչին ձգտում է Նիկոլ Փաշինյանը՝ իր ողջ ուժով եւ 10 տիրադավներով: Նախօրեին հայտնի դարձավ, որ մեղադրյալի կարգավիճակում են հայտնվել Մայր Աթոռի վեց եպիսկոպոս եւ մեկ քահանա: Եպիսկոպոսները մեղադրվում են դատական ակտի կատարմանը խոչընդոտելու համար, իսկ դատական ակտը վերաբերում է կարգալույծ հռչակված Գեւորգ եպիսկոպոս Սարոյանին՝ Մասյացոտնի թեմի նախկին առաջնորդին վերականգնելուն, որը հունվարի 27-ին կարգալույծ հռչակվեց Վեհափառի տնօրինությամբ: Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Հոգեւոր թեւը մանրամասներ չի հայտնում ժողովի կայանալ-չկայանալու մասին, քանի որ տեղեկություններ կան, որ ԱԱԾ-ն շարունակում է բիրտ ճնշումները, ընդհուպ՝ Վեհափառին կալանավորելու սպառնալիք-մեսիջներ են փոխանցում Մայր Աթոռին:

ՄԱՍՍՈՎԿԱՆ ԼՐԱՑՐԵԼ ԵՆ ՏԱՐԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

«Պալլադիում հոլլ»-ում ուրբաթ օրը կայացած «Վարչաբենդի» դիսկոտեկի ժամանակ շատերի զարմանքն է հարուցել տարեց պատգամավորների ներկայության փաստը: Հրապարակված կադրերից երեւում է, որ դիսկոտեկին մասնակցում են 70-ին մոտ Գագիկ Մելքոնյանը, Սերգեյ Բագրատյանը, Մարինա Ղազարյանը եւ այլք: ՔՊ խմբակցության մեր աղբյուրներից տեղեկացանք, որ պատգամավորներին հրահանգել են պարտադիր մասնակցել, գլխաքանակ ապահովել: Բանն այն է, որ չնայած Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, թե ավելի վաղ են դադարեցրել գրանցումները, քանի որ սպասվածից շատ մարդ է գրանցվել, իրականությունը բոլորովին այլ է եղել՝ միայն մի որոշ խմբի են թույլ տվել, որ գրանցվելու ընթացակարգով մասնակցի դիսկոտեկին, մեծ մասին իրենք են հրավիրել: Դրանք կամ ՔՊ-ական էին, կամ ՔՊ-ի աջակիցներ: Իսկ երբ ուշացումով հասկացել են, որ մասսովկան քիչ է, կարգադրել են, որ պատգամավորները մասնակցեն: Չնայած՝ ոչ բոլոր պատգամավորներն են մասնակցել: Ի դեպ, մեզ ասացին, որ այդ դահլիճում սովորաբար 200 հոգանոց միջոցառումներ են կազմակերպվել, բայց սեղան-աթոռները հանած՝ 400-500 մարդ կարող էին տեղավորել: Դիսկոտեկի կադրերից երեւում է, որ դահլիճը լեփ-լեցուն չէ, եւ գլխաքանակի խնդիր են ունեցել, այլապես զառամյալ պատգամավորներին չէին հրահանգի ներկայանալ ջահելների դիսկոտեկին, որ բացը լրացնեն:

ԻՐԱՎՈՒՆՔ

Ի՞ՆՉԸ ԿԱՐՈՂ Է ԿՆՈՋԸ ԴՐԴԵԼ՝ ՆԻԿՈԼԻՆ ԳՐԵԼ. «ՊԼՈՐՆԵՐԴ ՈՒՏԵՄ», ԵԹԵ ՈՉ ԱՆԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԷՋԸ՝
ՀԱՅԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Հշխանությունները եւ նրան ծառայող արբանյակները շարունակում են երկակի ստանդարտներով օրակարգ թելադրել, հանրությանն առաջնային հարցերից շեղելով մանիպուլացնել ու դեգրադացնել: Վաղուց արդեն գաղտնիք չէ, որ Փաշինյանի իշխանությունը թքած ունի մարդու իրավունքների, ներառյալ կանանց իրավունքների եւ բոլոր այն արեւմտյան արժեքների վրա, որոնք իբրեւ թե դավանում էին ժամանակին: Եթե երկրի ղեկավարը հայտարարում է, որ սրբազաններից մեկը «դոմփում» է քեռակնոջը, թունավորելով տվյալ կնոջ կյանքը, թիրախավորելով նրան, եթե մի ղեկավար հանրային հանդիպման ժամանակ հայտարարում է, որ «շինելու» է ընդդիմադիր գործիչներին, եթե իր թիմակցի անձնական՝ ինտիմ նամակագրությունը դարձնում է հանրային քննարկման առարկա, ներխուժում մարդկանց անձնական կյանք եւ ուժային կառույցների միջոցով շանտաժի ենթարկում հոգեւորականներին, եթե զոհվածի մորը Եռաբլուրում ոստիկանները քարշ են տալիս գետնին, էլ ի՞նչ լիբերալ արժեքների եւ մարդու իրավունքների մասին կարող է խոսք լինել տվյալ երկրում: Եվ այս մարդկանց թվում է, թե հայ հանրությունն ամեզիայով է տառապում՝ ոչինչ չի հիշում, կամ հավկուրություն ունի՝ ոչինչ չի տեսնում: Արդեն մի քանի օր է, ինչ իշխանական քարոզիչները, անգամ այն պատգամավորները, ովքեր տարիներով ծպտուն չեն հանել, ոհմակի պես հարձակվել ու քննադատում են Սամվել Կարապետյանի որդուն՝ Սարգիս Կարապետյանին, մի անզգույշ հայտարարության, մի կատակի համար: Սա այն հանրությունն է, որ Դոգի սեռական հայհոյանքներն է կլանված լսում, անգամ կանանց թույլ է տալիս, որ հայհոյանքներ գրեն ու ասեն:

Հայաստանը մի երկիր է, որտեղ բոլորը, այդ թվում՝ կին ընդդիմադիր գործիչները, բուլինգի են ենթարկվում եւ թիրախավորվում իշխանականների ու իշխանական ֆեյքերի կողմից: Նրանցից մեկը նախկին պատգամավոր **Նաիրա Զոհրաբյանն** է: Նա մեզ հետ զրույցում խոսելով կանանց իրավունքների եւ իշխանությունների կնատյաց վերաբերմունքի մասին՝ նկատեց. «Ես հետեւում եմ, թե ինչ է կատարվում վերջին օրերին՝ մի կետից հրահանգվող: Ինչ-որ մի անհաջող կատակ, կոնտեքստից կտրված՝ արդեն քանի օր է՝ տարածում ու տարածում են: Ես նայեցի հաղորդման ամբողջական տարբերակը. փոդքասթը վարողն է սկսում այդ թեման եւ խոսում է ակնհայտ փաստերի մասին: Այո, չի կարող երջանիկ, ինքնաբավ, բոլոր առումներով բավարարված կինը 24 ժամ նստել եւ Ֆեյսբուքում հայհոյանք գրել, չի կարող իր կողքին սիրող տղամարդ ունեցող կինն իր ամուսնուն ասել՝ մի գրկիր ինձ, մի սիրիր ինձ, ես հիմա պետք է նստեմ՝ Նաիրա Զոհրաբյանի կամ մեկ այլ կնոջ հասցեին սեռախեղված հայհոյանք գրեմ: Ժամանակին, երբ ես հանդգնություն ունեցա առաջադրվելու հեղափոխական էյֆորիայի ալիքում, որպես Երեւանի քաղաքապետի թեկնածու, իմ դեմ նողկալի արշավ սկսվեց՝ որպես կին: Ես բոլոր նյութերը, սեռախեղված կոլաժներն ու մոնտաժված ձայնագրությունները եւ կանանց գնդի սեռախեղված հայհոյանքները, սպառնալիքներն ու նամակները պահել եմ, մեծ իրավունքներ էին վերապահված, քանի որ այդ ամենն ուղղորդված էր: Մի՞թե ես կին չէի: Այսօր խոսում են կանանց իրավունքների մասին, սակայն այդ ամենը ոչ մի աղերս չունի այն արժեքների հետ: Կամ՝ Թագուհի Թովմասյանը կին չէ՞ր, որ իրենց պատգամավորը, խմբակցության քարտուղար լինելով, ասաց՝ գնա, սեռավարակի թեստ հանձնիր: Ո՞ւր էին այդ ժամանակ կանանց դատապարտումները, որ այսօր հարձակվել են մի ինչ-որ անհաջող ձեւակերպման համար: Ի վերջո՝ մենք պետք է ընդունենք, որ մեր հասարակության մեջ կա մի սեգմենտ, որն ունի խնդիրներ: Խոսքն այն կանանց մասին է, որոնք ունեն հոգեբանական խնդիրներ, իսկ հոգեբանական խնդիրները շատ հաճախ գալիս են հենց ֆիզիոլոգիական խնդիրներից: Այդ մասին խոսելն ամոթ չէ: Մենք պետք է ունենանք համարձակություն՝ խոսելու այն մասին, թե ինչն է դրդում հայ կնոջը նստել եւ սեռական հայհոյանքներ գրել այս կամ այն անձի մասին, կամ՝ ինչը կարող է հայ կնոջը դրդել՝ Նիկոլին գրել՝ «պլորներդ ուտեմ», եթե ոչ անբավարարվածությունը: Այդ կարգի մեկնաբանություններ գրողները հո բոլորը ֆեյք չե՞ն, նրանց մեջ նաեւ կան իրական օգտատերեր: Ես մի քանի անգամ դիմել եմ դատախազություն՝ իրական օգտատերերի գրառումների համար, սակայն ոչ մի ընթացք չի տրվել, անկապ մի երկու անգամ կանչել ու տուն են ուղարկել: Մենք պետք է հասկանանք, թե ինչպես է մեր հասարակության մեջ, այո, հիմնականում կանանցից կազմված մի սեգմենտ ձեւավորվել, որի մոտիվացիան հայհոյանքն է: Սա այն նույն սեգմենտն է, որը ձայն է տալիս ԱՄՆ-ում ծվարած հայհոյախոսին: Սա խնդիր է, որի մասին պետք է խոսել»:

ՄԵԶ ՈՉ ՄԻ ԲԱՆ ՉԻ ԼԻՆՈՒՄ՝ ԻՐԵՆՔ ԻՐԵՆՑ ԵՆ ՈՉՆՉԱՑՆՈՒՄ

Նիկոլ Փաշինյանը չի դադարում Հայ առաքելական եկեղեցու դեմ անթաքույց արշավը: Նախօրեին տեղեկացանք, որ մի շարք հոգեւորականներ հրավիրվել են ՔԿ, ապա նրանցից 6-ին արգելվել է ՀՀ սահմանը լքել: Սա բացահայտ քայլ է՝ կանխելու Եպիսկոպոսաց ժողովը, որը պետք է տեղի ունենա փետրվարի 16-ին՝ Ավստրիայում: Մեղադրյալի կարգավիճակ ունեցող 6 բարձրաստիճան հոգեւորականի արգելվել է բացակայել երկրից: Նրանք են Գուգարաց թեմի առաջնորդ Հովնան եպիսկոպոս Հակոբյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Մակար եպիսկոպոս Հակոբյանը, Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, Տ. Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը, Եկեղեցականաց եւ երիտասարդաց վերապատրաստման ծրագրերի տնօրեն Վահան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը: Թեմայի մասին զրուցել ենք **Տեր Զարեհ քահանա Աշուրյանի** հետ:

- Իշխանությունը փորձում է իմիտացա ստեղծել, թե իբրեւ եպիսկոպոսները «մեծ հանցանք» են կատարել՝ դատարանի որոշումը չեն կատարել, եւ նրանց նկատմամբ խափանման միջոց են ընտրել ու ելքն արգելել երկրից. կարելի է կարծել, թե խոսքը մոլագար-մարդասպանների մասին է: Իբրեւ թե Եպիսկոպոսաց ժողովն ու Մայր Աթոռի այս «հանցանքը» պատահականորեն են համընկել: Ի վերջո՝ ո՞րն է այս քայլերի նպատակը: Ինչի՞ է ուզում հասնել Փաշինյանը: Կհաջողվի՞ նրան կանխել Եպիսկոպոսաց ժողովը:

- Նախ, ուզում եմ զրույցը սկսել այնտեղից, որ ինչ-որ մարդիկ հայտնի խմբերի կողմից ուղղորդվող բամբասանքներ են տարածում, թե իբրեւ Եկեղեցու ներսում հոգեւորականները սատարում են կեղծ բարեփոխմանը եւ նրանց գաղափարներին, սակայն դա միֆ է, կեղծիք, եւ այն անպայման պետք է պայթեցվի: Ամեն ինչ բացահայտվելու է եւ մերկացվելու է: Իշխանություններին եւ նրա կամակատարներին ձեռնտու չէ, որ կայանա Եպիսկոպոսաց ժողովը: Ամեն կերպ փորձելու են պրոցեսը խոչընդոտել: Ես չեմ կարող ասել, թե ինչ վերջնական որոշում կկայացնի Մայր Աթոռը, բայց մի բան միանշանակ է՝ այսքան զուգադիպություն չի կարող լինել: Այն շինծու գործերը, որոնք կարել են եպիսկոպոսների վրա, նախ սահմանադրական իրավունքին դեմ է, դեմ է ոչ միայն իրավական առումով, այլեւ՝ բարոյական: Եթե ժամանակին ստախոսությունը քրեականացվեր, այս մարդիկ ցմահ ազատազրկված կլինեին այսօր:

- Ըստ Ձեզ՝ հնարավոր չէ՞ Եպիսկոպոսաց ժողովն այլ ֆորմատով իրականացնել, օրինակ, տեսակապի միջոցով:

- Այս հարցի մասին ես չեմ կարող խոսել, եպիսկոպոսները՝ Վեհափառի գլխավորությամբ, իրենք պետք է որոշեն ֆորմատը: Իշխանություններն ասում են՝ իրավունք չունեն Հայաստանի սահմանից դուրս ժողով անցկացնել՝ նման բան չկա, ստում են: Բազմաթիվ օրինակներ կան, որ ժողովները դրսում են անցկացվել:

- Մասյացոտնի թեմի նախկին տիրադավ առաջնորդը դեռ շարունակում է սպառնալ թեմի քահանաներին: Առհասարակ, ի՞նչ իրավիճակ է թեմում:

- Նա զավթել է առաջնորդարանը, վաղուց մեր թեմի առաջնորդը չէ: Պետության աջակցությամբ, ավելի ճիշտ՝ իշխանությունների, նա շարունակում է առաջնորդարանի շենքը զավթած պահել: Ամեն ինչ շատ պարզ է, քանի դեռ ունեն Նիկոլ Փաշինյանի անձնական աջակցությունը, իրենց այսպես են դրսեւորելու եւ շարունակելու են անամոթությունների շարքը:

- Իսկ ինչո՞վ է նա զբաղված:

- Ինձ հասած տեղեկություններով՝ Տեր Արտաշեսի դեպքից հետո սպառնալու փորձերը փոքր-ինչ նվազել են, բայց, ամեն դեպքում, նրանք չեն հանձնվելու եւ փորձելու են մինչեւ վերջ գնալ, որքան կարողանան, դեռ իրենց փչացնելու են եւ խայտառակվելու են: Մեզ ոչ մի բան՝ իրենք իրենց են ոչնչացնում: Ինչքան էլ որ բամբասեն եւ կեղծ տեղեկություններ տարածեն, դրանից մեր կյանքը չի փոխվում, իսկ, այ, իրենց կյանքը փոխվում է էապես: Եկեղեցին եթե բամբասանքներից վախենար, վաղուց կդադարեր գոյություն ունենալուց: Եկեղեցին շատ հալածանքներ է տեսել, սա էլ դրա մի փոքրիկ մասն է, որն անպայման հաղթահարելու ենք: Գալու է մի օր, որ նրանք երես չեն ունենալու՝ մարդկանց մեջ դուրս գալու:

- Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ եպիսկոպոսները հրավիրվեցին ՔԿ:

- Ակնհայտ է, որ իրավապահներին խառնել են Եկեղեցու դեմ պայքարին՝ դատարաններից սկսած, մինչեւ քննչական, ոստիկանություն եւ ԱԱԾ: Դա տեսնում են բոլորը: Ինձ էլ տարիներով դատում էին՝ Եհովայի վկաների պահանջով: Մենք մեզ օրենքից վեր չենք դասում, բայց երբ օրենքը դարձնում են մտրակ, երբ դրանով լռեցնում են մեզ, դա արդեն օրենք չէ: Օրենքն այն է, որ իրավականությունը համարում է առաջնահերթություն: Այստեղ չկա օրենքը: Հանրության իրավագիտակցության մեջ արդեն նստած է, որ իրավապահների որոշումներն օրենքին այնքան էլ մոտ չեն:

- Համացանցում տեղեկություններ են տարածվում, որ Վեհափառի մուտքը եւս պատրաստվում են փակել:

- Ես չունեմ նման տեղեկություն, սակայն սրանցից ոչինչ հեռու չէ:

ՏԵՍՈՒ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԻ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ «ՓՈՇԻՈՎ» ՉԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ապիրընտրական վերադասավորումներից պարզ է դառնում, որ ընդդիմադիր դաշտում այս պահին երեք խոշոր միավոր կարող է ձեւավորվել՝ Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստանը», երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած դաշինքը եւ Գագիկ Ծառուկյանի շուրջ ձեւավորվող «Առաջարկ Հայաստանին» միավորը: Չնայած Ռոբերտ Քոչարյանն օրերս իր ասուլիսում հույս հայտնեց, որ նախորդ ընտրություններին մասնակցած 25 ուժերի փոխարեն այս ընտրություններին կմասնակցի 7-8 ուժ, ուստի փոշիացող ձայներն էլ ավելի քիչ կլինեն, սակայն այս պահին չի նկատվում, որ ընդդիմությունը հունիսի 7-ի ընտրություններին մտադիր է մասնակցել ավելի խելամիտ տարբերակով՝ փոշիացումները նվազագույնի հասցնելու հայեցակարգային մոտեցմամբ: Առանձին կուսակցություններ, որոնք տարբեր հարցումներով չեն հաղթահարելու ընտրությունների անցողիկ շեմը, արդեն հայտարարել են միայնակ մասնակցելու մասին: Այդ թվում է Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջնորդած ՀԱԿ-ը: ՀԱԿ անդամ կանոն, իշխանությունն է լինում: Այսինքն՝ ակնհայտ է, որ անցողիկ շեմը չհաղթահարողներն ուղղակի կամ անուղղակի օգնելու են իշխանությանը: 2018-ին այդ «փոշին» կազմել է 17 տոկոս, որից 10-ը ստացել է «Իմ քայլը», եւ նրա տոկոսը դարձել է 73՝ բացարձակ մեծամասնություն: ԸՕ-ն նաեւ 3 տոկոս բոնուս է նախատեսում ամենաշատ քվե ստացողին, որ նա լրացնի պակասը եւ ձեւավորի կայուն մեծամասնություն:

2021-ին էլ շուրջ 12 տոկոս փոշիացվեց, որը կրկին օգնեց Նիկոլ Փաշինյանին՝ խորհրդարանական մեծամասնություն կազմել: Եվ դրա մեղավորն այն փոքր ու մեծ քաղաքական ուժերն էին, որոնք չհաղթահարեցին ԱԺ անցողիկ շեմը՝ 4 տոկոս կուսակցությունների, 8 տոկոս՝ դաշինքների դեպքում: Մինչդեռ ընտրություններից առաջ այդ բոլորին բազմիցս զգուշացվել էր՝ ինչ կլինի առանձին-առանձին հանդես գալու դեպքում, բայց նրանք անտեսեցին այդ հորդորները: Անցած ընտրություններին Փաշինյանին «փոշիով» աջակցած «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը եւս մասնակցելու է այս տարի, սակայն նրա առաջնորդը՝ նությանը: Ուստի ԼՀԿ-ն առաջարկել է ընդդիմությանը՝ ընտրություններին մասնակցել մեկ միասնական ճակատով, որը 2012 թվականին Վրաստանում կիրառված մոդելն է, ընդդիմությունը, ի դեմս Բիձինա Իվանիշվիլու, մասնակցում էր 4-5 ճակատով եւ բազմաթիվ անհատների միավորմամբ, որի արդյունքում ոչ միայն Իվանիշվիլին հաղթեց Սահակաշվիլուն, այլեւ խորհրդարան անցավ 2 ուժ, եւ շատ փոքր էր մնացյալ մասնակից ուժերի փոշին: Մեր դեպքում, հաշվի առնելով, որ եղել է Մոլդովայի, Ռումինիայի սցենարը, որ փակել են որոշ ուժերի մասնակցությունը՝ այս հարցը եւս լուծում է, քանի որ իշխանությունը չի կարող մեկ ընդդիմադիր միասնական ճակատին դուրս թողնել ընտրապայքարից, իսկ առանձին մասնակիցներին կարող է: Հայտնի է նաեւ, որ նախընտրական շեմը դաշինքների համար բարձրացվել է 8-10 տոկոս, սա եւս մեծացնում է փոշիացման հնարավորությունը»: Եթե միավորում տեղի չունենա, ԼՀԿ-ն, Խաժակյանի փոխանցմամբ, միայնակ կմասնակցի ընտրություններին: «ԼՀԿ առաջնորդն անգամ հայտարարել է, որ այդ կոնսոլիդացիայի ժամանակ գործընկերներին հորդորում՝ հետեւել ՀՅԴ-ի օրինակին, որը գալիք ընտրություններին դաշինքով մասնակցելու որոշում է կայացրել: «Դեղատոմսը, որը մենք առաջարկում ենք, խոշոր դաշինքների ձեւավորումն է, եւ մենք անում ենք այն, ինչը կոչ ենք անում ուրիշներին, եթե փոքր ընդդիմադիր ուժերը տեսնում են, որ շանս չունեն անցնելու, պետք է գան՝ խոշոր դաշինքներին միանան կամ իրար հետ միավորվեն, այլապես գիտակցա-

Արամ Մանուկյանին հարցրինք՝ ինչ պետք է անել, որ ձայները չփոշիանան, եւ դրանից չշահի իշխանությունը: Ասաց, որ դժվարանում է պատասխանել, խոստացավ ավելի ուշ մանրամասն անդրադառնալ հարցին, քանի որ այս պահին ժողովի է մասնակցում, իսկ հետո չպատասխանեց մեր զանգերին:

Հիշեցնենք, որ, ըստ օրենքի, ԱԺ չանցած կուսակցությունների ձայները բաշխվում են անցած ուժերի վրա, եւ առյուծի բաժինը հասնում է առաջին տեղը զբաղեցրած ուժին, որը, որպես Էդմոն Մարուքյանը, ընդդիմադիր դաշտին միասնական ճակատով մասնակցության առաջարկ է արել՝ վրացական մոդելով: ԼՀԿ փոխնախագահ **Դավիթ Խաժակյանը**, վկայակոչելով սոցհարցումների արդյունքները, հիշեցնում է, որ Փաշինյանը չունի մեծամասնություն եւ ընտրություններին հաջողելու համար կարող է ինքը նպաստել, որ հնարավորինս շատ ուժեր մասնակցեն եւ փոշիացնեն ձայները: «Մեծ քանակի ուժերի մասնակցությունը եւ ձայների փոշիացումը ձեռնտու են միայն այս իշխապատրաստ է անձնապես ցուցակում չլինել, միայն թե կուսակցական ամբիցիաները մի կողմ դրվեն, եւ իշխանափոխությունը կայանա: Բայց եթե ընտրությունների մասնակից 20 եւ ավելի ուժերը կարծեն, որ յուրաքանչյուրն առնվազն 10% ունի իր գրպանում, ապա մենք առավել եւս պոտենցիալ ունենք՝ հաջողելու ընտրություններում»,- հայտարարեց Խաժակյանը:

«Հայաստան» դաշինքի պատգամավոր, դաշնակցական **Արթուր Խաչատրյանն** էլ է ընդդիմադիր բար կամ ոչ գիտակցաբար կարող են ջուր լցնել Նիկոլ Փաշինյանի ջրաղացին»,- ասաց Խաչատրյանը՝ հիշելով, որ 2021 թվականին շուրջ 25 ուժ էր մասնակցում ընտրություններին: «Ես ուզում եմ հավատալ, որ այդ մասնակիցների մեծ մասն ուղղակի սխալ էր գնահատել իր շանսերը, ոչ թե գիտակցաբար ընդդիմադիր դաշտում Փաշինյանի խաղն էր խաղում: Հիմա էլ ենք կոչ անում ընդդիմադիր ուժերին՝ ընտրություններին մասնակցել մի քանի բլոկով, այլ լծակ չկա, գոյություն չունի՝ այս խնդրի դեմս առնելու»:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ «ՄԱՔՐՎԵՑ», ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՐԹԱԿԱՆ «ՏԻՏԻԿԸ» ԴՐԵՑ

Աշակույթի նախկին նախարար Հասմիկ Պողոսյանի վերաբերյալ կոռուպցիոն գործերից մեկը, որը վերաբերում էր Չայկովսկու դպրոցի տարածքին, երեք տարվա երկար ու խճճված նախաքննությունից ու դատաքննությունից հետո ի վերջո երջանիկ ավարտ ունեցավ: Հակակոռուպցիոն դատարանն օրերս նրան դատապարտեց 4 տարի 6 ամիս ազատազրկման, բայց կիրառելով «Էրեբունի-Երեւանի հիմնադրման 2800-ամյակի եւ Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ» քրեական գործերով հայտարարված համաներումը՝ նախկին նախարարին ազատեց պատժից: Դատաքննությունն իրականացվել է հեռակա կարգով, եւ դատավճիռը նույնպես կայացվել է հեռակա, առանց Հասմիկ Պողոսյանի մասնակցության, ինչն օրենքում կատարված փոփոխություններից հետո օրինական է համարվում:

Հայտնի է, որ նախկին նախարարը մեղադրվում էր, ծառայողական լիազորություններն ի վնաս պետական շահերի օգտագործելով, Չայկովսկու դպրոցի կաթսայատան 300 քմ տարածքը հափշտակելուն օժանդակելու մեջ: Հափշտակմանը, ըստ մեղադրանքի, մասնակցել էին Գոռ Դավթյանը, Հմայակ Ավագյանը, այլք, ովքեր հիմնել էին «Սոխոսենթր» ընկերությունը, նաեւ՝ դպրոցի տնօրենն ու նրա եղբայրը՝ Նիկոլայ Կոստանդյանը: «Սոխոսենթր» ընկերության ստեղծունից օրեր անց, 2012 թվականին կեղծ ներդրումային ծրագիր էր ներկայացրել, թե իբր պետք է այդ տարածքում «Գրքերի աշխարհ» համալիր կառուցի: Պետությանը, ըստ նախաքննության նյութերի, հասցվել էր 100 մլն դրամի վնաս: Խարդախներին օժանդակելու միջոցով Հայաստանի Հանրապետությանը հասցված վնասը փոխհատուցվել է դեռեւս 2 տարի առաջ, պետությանն է փոխանցվել Չայկովսկու դպրոցի հարեւանությամբ «Սոխոսենթրի» կառուցած համալիրի մի մասի՝ 235,8 քմ տարածքի սեփականության իրավունքը:

Գործարքը տեղի է ունեցել քաղաքացիական գործի շրջանակներում ձեռք բերված հաշտությամբ:

Չայկովսկու դպրոցից բացի, Հասմիկ Պողոսյանն անցնում էր նաեւ նախկին ԱՕԿՍ-ի շենքի գործով: Նրան եւ Ռուսաստանում ու Իսրայելում Հայաստանի նախկին դեսպան, «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության հայկական ընկերություն» ՀԿ նախագահ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Սմբատյանին մեղադրում էին պատմամշակութային հուշարձան հանդիսացող այս շենքը յուրացնելու մեջ: Նախաքննության ընթացքում Հասմիկ Պողոսյանի նկատմամբ հետախուզում էր հայտարարվել: Ըստ լուրերի, նա գտնվում է Իտալիայում: Այլ խոսակցությունների համաձայն՝ նա բուժման նպատակով մեկնել է Ռուսաստան: Մենք հարցրինք Հասմիկ Պողոսյանի փաստաբան **Գեորգի Մելիքյանից**, թե ինչ եղավ այդ մյուս գործը, եւ արդյո՞ք հետախուզումն ուժի մեջ է: «Ոչ, ԱՕԿՍ-ի վերաբերյալ քրեական վարույթն իմ պաշտպանյալի նկատմամբ կարճվել է, հետախուզումը վերացվել է»,- ասաց նա: Նշեց նաեւ. «Տիկին Պողոսյանը չի ընդունել իր մեղքը, սակայն քանի որ համաներում կիրառվեց, մենք չենք բողոքարկելու դատավճիռը»: Ասաց նաեւ, որ «Սոխոսենթր» ընկերության հետ իր պաշտպանյալը ոչ մի կապ չունի: Հետաքրքրվեցինք՝ արդյո՞ք կա այլ քրեական գործ՝ Չայկովսկու դպրոցի հետ կապված: «Որքան որ ես եմ տեղյակ, չկա»: Հարցին, թե տիկին Պողոսյանը գալու է Հայաստան, այլեւս կարծես թե արգելք չկա, փաստաբանը պատասխանեց. «Իհարկե, գալու է: Սա իր երկիրն է: Նա շատ է սիրում իր երկիրը եւ վերադառնալու է»:

Այնպես որ, Հասմիկ Պողոսյանը կարող է ազատ շունչ քաշել, պտտվել իր սիրելի Իտալիայով, գալ Հայաստան կամ մեկնել ցանկացած այլ երկիր: Իսկ դատախազությունը հերթական «գալոչկան» կարող է դնել հակակոռուպցիոն պայքարում: Ինչպես ասում են՝ եւ գայլերն են կուշտ, եւ ոչխարները՝ ողջ: Ինչ եղավ Արմեն Սմբատյանի հետ, որը Հասմիկ Պողոսյանի «հանցակիցն» էր, ըստ քննիչների: Արմեն Սմբատյանի մասով գործը դեռ դատարանում է: Աբովյան 3 հասցեում գտնվող՝ մի քանի միլիոն դոլար արժողության ԱՕԿՍ-ի շենքը 2023 թվականին վերադարձվել է պետությանը՝ Հակակոռուպցիոն դատարանի կայացրած վճռով: Իսկ 2024 թվականի հունիսի 6-ին կառավարությունը որոշեց այդ շենքի 1-3 հարկերը 10 տարով վարձակալության հանձնել «Զեթ ընդ Էյ» ՍՊԸ-ին, որն առաջարկել է 16,2 մլն դրամ ամսական վարձավճար եւ պատրաստվում է այնտեղ նորաձեւության կենտրոն բացել ու բրենդային հագուստ վաճառել: Ընկերությունը պատկանում է գործարար եղբայրներ Հայկ եւ Ղուկաս Խաչատրյաններին: Այն, որ պատմամշակութային շենքում նորաձեւության ու առեւտրի կենտրոն է գործելու, միանգամայն մեր ժամանակի տրամաբանության մեջ է: Ի դեպ, Փաշինյանը սա բացատրել էր նրանով, որ դեմ է այս շենքի «կոթողացմանը», որ այն «ապրելու համար է»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒՍՏՆԵՐՆ ԷԼ ԱՎԵԼԻ ԵՆ ՀԱՐՍՏԱՑԵԼ, ԵՎ ՍՐԱ ՀԱՇՎԻՆ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ ԳՐԱՆՑՎԵԼ

Ինչ իշխանական քարոզիչները «խաղաղության խաչմերուկի» շրջանակներում Հայաստանի տնտեսության վերելքի ու զարգացման նոր հնարավորությունների վերաբերյալ առասպելներ են հյուսում, միջազգային հայտնի ֆինանսական կառույցներից մեկը՝ ի դեմս Համաշխարհային բանկի, առաջիկա տարիներին Հայաստանի տնտեսական աճի տեմպի դանդաղում է կանխատեսում: Այս տարվա համար գնահատվող 5.2 տոկոս աճի փոխարեն՝ հաջորդ տարվա ակնկալիքը 4.9 տոկոս է: 2027թ. համար էլ սպասումները 4.7 տոկոսի սահմաններում են:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցն է տնտեսագետ **Աղասի Թավադյանը**:

- 2025-ի արդյունքներով, տնտեսական աճի հնարավոր սցենարների վերաբերյալ հարցին ԿԲ նախագահը հայտարարեց, որ ունենք բարձր տնտեսական աճ՝ 5.2%, եւ ցածր գնաճ. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ տնտեսական աճ ենք ունեցել 2025 թվականին:

- Եթե տնտեսական աճին նայենք դինամիկայի մեջ, ապա 2022 թվականին Հայաստանում գրանցվել է 12.6% տնտեսական աճ, 23 թվականին՝ 8,7%, 24-ին՝ 5,9, 25-ին, ըստ ԿԲ-ի՝ 5.2%: Դատելով ժամանակացույցից՝ աճը սառում է, տարեցտարի ավելի քիչ աճ է գրանցվում Հայաստանում՝ հաշվի առնելով այլ ֆակտորներ, օրինակ՝ հարկերի բարձրացման հետ, որոնք ավելի են սառեցնում տնտեսությունը, այնքան էլ դրական տենդենց չի կարելի համարել: Ինչ վերաբերում է գնաճին, ապա, այո, գնաճը Կենտրոնական բանկի կողմից սահմանված 3 պլյուս-մինուս 1, այսինքն՝ 2-4%-ի սանդղակում է, սակայն այստեղ էլ կան խնդիրներ: Հանրապետությունում հիմնականում գնաճը գրանցվում է պարենային գների մեջ, իսկ պարենային գներն ամենամեծ ազդեցությունն ունեն ցածր եւ միջին եկամուտներ ունեցողների վրա: Ցածր եկամուտներ ունեցողի սպառողական զամբյուղի մոտ 60%-ը պարենային ապրանքներն են, որոնք վերջին տարիներին բավականին զգալի աճ են գրանցել՝ համեմատած բազային գնաճի հետ: Այս պարագայում ցածր եկամուտ ունեցողներն ավելի կորուստ են կրում գնաճից, հաշվի առնենք, որ թոշակներն էլ չեն ավելանում:

- Վարչապետն ասում էր՝ եթե թոշակառուների թոշակը 10 հազար դրամով բարձրացնենք, ի՞նչ կանի թոշակառուն. չի իմանա՝ ոնց ծախսի այդ գումարը: 2026 թվականի հունվարի 1-ից հետվճարի սահմանաչափը 12 տոկոսի փոխարեն սահմանվեց 20 տոկոս: Կարծում եք՝ թոշակառուի բեռը կթեթեւանա՞, այն պարագայում, երբ ամեն ամիս 10 կամ 20 դրամով թանկանում են պարենային ապրանքները:

- 20 տոկոս վերադարձը գործում է միայն քարտերով գնելու դեպքում: Սա մի քանի նպատակ ունի, առաջին հերթին՝ ստվերի կրճատումը եւ թոշակառուների գործառնությունից գոյացած ավելի շատ տվյալներ հավաքագրելը, սակայն այստեղ մի քանի խնդիր կա: Պարզ խնդրից սկսենք, որ թոշակառուները կարող են չիմանալ՝ ինչպես քարտերից օգտվել: Երկրորդը. շատ են մարդիկ, ովքեր բանկային համակարգում սեւ ցուցակի մեջ են եւ չեն կարող օգտվել պարզապես քարտային համակարգից, որովհետեւ հարկադիրը գալու է եւ տանի գումարը: Սակայն մի տեղ պետք է համաձայնել վարչապետի հետ՝ կա զգայնության շեմ: Այն մարդու համար, որն ապրում է աղքատության շեմին, էական չէ՝ թոշակը 2 հազար դրա՞մ է բարձրանում, թե՞ 10 հազար, որովհետեւ մինչեւ այդ զգայնության շեմը չհաղթահարվի, ինքը լիարժեք չի զգա, որ իր թոշակը բավարարում է ապրուստի համար: Սակայն, մյուս կողմից էլ, դա արդարացում չի կարող լինել, եւ, այսպես, թե այնպես, պիտի բարձրացնենք թոշակները, գոնե մինիմալ գնաճին համապատասխան, որպեսզի կարողանանք ձգտել այդ զգայնության կետին:

- Փաշինյանը հայտարարել էր, որ 2018 թվականից ի վեր ՀՀ տնտեսությունն աճել է ավելի քան 50 տոկոսով, ՀՆԱ-ն ավելի քան կրկնապատկվել է. եթե 2017 թ. 1 շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ն 3 հազար 872 դոլար էր, ապա 2025 թ.՝ գրեթե 9 հազար 400 դոլար: Ի՞նչ կասեք այս մասին:

- Սկսենք հայտարարությունից եւ տեսնենք, թե որտեղ է շան գլուխը թաղված, որովհետեւ իրականում Հայաստանում այդպիսի աճ է գրանցվել: Որպեսզի հասկանանք, թե որտեղ է խնդիրը, մի քանի զուգահեռ անցկացնենք՝ պարզ օրինակով. եթե 2018 թ. Հայաստանում 5 անձ պայմանականորեն աշխատում էր 1, 2, 3, 4 եւ 5 դրամ եւ միջինը ստանում էր 3 դրամ, այժմ նույն 5 անձը պայմանականորեն վաստակում է 1, 2, 3, 4 եւ 10 դրամ, ինչը միջին աշխատավարձը դարձրել է 4 դրամ: Այնպես է ստացվում, որ հարուստներն էլ ավելի են հարստացել, եւ սրա հաշվին տնտեսական աճ է գրանցվել: Տնտեսական աճը նայենք ըստ բաղադրիչների՝ հիմնականում SS եւ բանկային ոլորտներն այս տարիների ընթացքում աճել են 3 անգամ, իսկ մյուս ոլորտներն այնպիսի աճ են գրանցել, որը համահունչ է գնաճին: Գյուղատնտեսությունը միակ բացառությունն է, որտեղ 2018 թվականից 10% աճը կրճատվել է, բարձիթողի վիճակում է: Եթե նայենք, թե որտեղից է գեներացվում այդ փողը, ապա կտեսնենք, որ, օրինակ, աշխատավարձի ֆոնդն այս պահին, որը զգալի աճ է գրանցել 2018 թվականից սկսած, 80%-ը գեներացվում է Երեւան քաղաքում, նույնն էլ՝ գրանցված առեւտրի 80%-ը: Ռուսաստանից եկած մեծ քանակի փողերի եւ այլ ֆակտորների հաշվին 2022 թ. ունեինք 12% տնտեսական աճ, որը բարձրացրեց աշխատավարձերը հիմնականում բանկային ոլորտում: Ռուսաստանից եկած SS մասնագետների շնորհիվ այդ ոլորտն աճեց, եւ այդ աճը տեղի ունեցավ Երեւանում եւ Երեւանի կենտրոնում, իսկ քաղաքից դուրս՝ մարզերում, վիճակը նույնն է: Այսինքն՝ մենք ունենք մի աճ, որ տեսնում ենք թղթի վրա, սակայն միջին եւ ցածր եկամուտներ ստացող քաղաքացին զգալի տարբերություն չի զգում, որովհետեւ աճը հիմնականում բաժին է ընկել հարուստներին:

ՏԱՆՈՒՄ-ԲԵՐՈՒՄ ԵՆ ՄԱՐԴԿԱՆՑ՝ ՉԵՆ ԳՐԱՆՑՈՒՄ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

90-ականներին Հայաստանում 100-ից ավելի կուսակցություն կար: Բազում պատմություններ ու անեկդոտներ կային այս թեմայով՝ մի մարդատար ավտոմեքենայում տեղավորվող կուսակցության, կնոջ ու սիրուհու ձայների հույսին մնացած կուսառաջնորդների եւ այլնի մասին: Հետո «Կուսակցությունների մասին» օրենք ընդունվեց, որտեղ բավականին խստացվեցին կուսակցություն ունենալու պայմանները՝ մարզերում կառույցներ, 2 հազարից ավելի անդամ, որոնց անձնագրային տվյալները պետք է առկա լինեն Պետռեգիստրում, եւ, ուզած-չուզած, որոշ կուսակցություններ ինքնալուծարվեցին, մյուսները միացան խոշորներին, եւ դաշտը փոքր-ինչ մաքրվեց: Թեեւ մնացածն էլ շատ էր Հայաստանի նման փոքր երկրի համար: Եվ իսկապես, ի՞նչ կուսակցության մասին կարող է խոսք գնալ, եթե այն չի մասնակցում հինգ տարին մեկ կազմակերպվող Ազգային ժողովի ընտրություններին, ՏԻՄ ընտրություններին, համագումարներ չի անում, քաղաքական կյանք չի վարում: Այսինքն, նվազագույն քվեներ ստանալու հույս կամ ընտրագրավը մուծելու հնարավորություն չունի կամ էլ մասնակցում է՝ ձայներ փոշիացնելու, այս կամ այն ուժի պատվերը կատարելու համար:

Ի վերջո, վերոնշյալ խստացումներից հետո ինչ-որ մի շրջանում նորից կուսակցություններին ներկայացվող պահանջները նվազեցրին, հսկողություն էլ չկար, ուստի սկսեցին նոր կուսակցություններ գրանցել, եւ Հայաստանում այժմ կա 100-ից ավելի կուսակցություն, որոնց շատերի անունները, գաղափարախոսությունը, անգամ ղեկավարների ով լինելը մեզ հայտնի չեն: ԱՄՆ-ի պես գերտերությունում ընդամենը մի քանի կուսակցություն է գործում, հիմնական մրցակիցները երկուսն են՝ հանրապետականներն ու դեմոկրատները, իսկ մեզ նման փոքր, աղքատ երկրում կուսակցությունների թիվն անհաշվելի է:

Մեր պնդմանը, թե այժմ կուսակցություններ գրանցելը, հիմնադրելը դյուրին են դարձել, «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ **Դավիթ Խաժակյանը** չհամաձայնեց: Նա վստահեցնում է, որ վերջին 3-4 տարում Փաշինյանի իշխանությունն ամեն հնարավոր բան արել է, որպեսզի կուսակցություն գրանցելու գործընթացը բարդանա, որպեսզի Մոլդովայի օրինակը կարողանան կրկնել: «Վերջին շրջանում կուսակցություն գրանցելու պրոցեսը բարդացվեց, բարդացվեց, եւ ստեղծվեց իրավիճակ, որ կուսակցության կառավարման խորհրդի բոլոր անդամներին պարտավորեցրին պարտադիր հայտարարագիր լրացնել, կուսակցությունը եւս պետք է հայտարարագիր լրացնի եւ անցնի աուդիտ, ինչպես նաեւ՝ չորս տարին մեկ կուսակցությունը պարտավոր է անցկացնել համագումար, իսկ համագումարն ունի բավականին ընթացակարգային առանձնահատկություններ, ընտրական փուլում մասնակցության ժամանակ հայտարարագրերը կուսակցություններին պարտադրել են ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով, այդ թվում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Այժմ մեր մտահոգությունն այն է, որ այս ընթացակարգերի բարդացումով, ինչպես նաեւ՝ քաղաքական նկատառումներով, իշխանությունները կարող են գնալ Մոլդովայի սցենարով եւ ինչ-որ ուժերի պարզապես չգրանցել կամ էլ գրանցվածների գրանցումն անվավեր ճանաչել: Պրոցեսներն իրականում բարդացել են՝ տեխնիկական իմաստով, այն ոչ թե բովանդակային իմաստ է ստացել, որ գրանցված կուսակցություններն իրապես լինեն գաղափարական եւ այլն, այլ պարզապես ընթացակարգային, տեխնիկական բարդությունների մասին է, որոնք Պետռեգիստրին եւ ԿԸՀ-ին հնարավորություն են տալիս՝ անվավեր ճանաչել մի շարք կուսակցությունների»,- ասում է Խաժակյանը:

Բայց այս հարյուրից ավելի կուսակցություններն ինչպե՞ս են գրանցվել եւ գործունեություն ծավալում: «Նրանց մեծ մասն անգամ գրանցված էլ չէ, իրենք պնդում են, որ կա կուսակցություն, սակայն թղթերը ստանում են բավականին ուշ, ամեն դեպքում, բարդացնել գրանցումը՝ չի նշանակում դարձնել անհնարին, տեխնիկապես են բարդացումները, իսկ այդ ամենն այն բանի համար է, որ իշխանությունը վերահսկողություն ունենա գործընթացների վրա, եւ եթե պետք լինի ինչ-որ կուսակցությունների չգրանցել, ապա չգրանցեն: Օրինակ՝ ԴՕԿ, Աղազարյանի ՄԱՍԿ-ը եւ այլն: Տանում-բերում են մարդկանց եւ չեն գրանցում: Այժմ չկա, օրինակ, մարզային կառույցներ ունենալու պահանջ, սակայն, ինչպես արդեն ասացի, չորս տարին մեկ պետք է կուսակցությունը համագումար անցկացնի, ինչպես նաեւ՝ համագումարը պետք է հաստատի նախընտրական ցուցակի առաջին 30 համարը: Սա էլ, ըստ էության, բարդացնող նորամուծություն է»:

ՏԻՍՏԻԳՄ

ԲԵՆԶԻՆԻՍՏՆԵՐՆ ԷԺԱՆ ՀԱՃՈՒՅՔ ԵՎ ԿԱՐՃ ԿՅԱՆՔ ԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ

Թմրամոլների մի տեսակ կա՝ բենզինիստներ, որոնք բենզին են սրսկվում: Թմրամոլության ամենախայտառակ տեսակն է սա, օրգանիզմն ամենաարագն է քայքայվում, եւ մահը շատ շուտ է վրա հասնում, բայց բենզինն էժան է: Փաշինյանի կառավարող խմբակը՝ ինքը, բենզինիստ լինելով, երկիրն է վերածում բենզինիստի, Հայաստանը նստեցրել է իբրեւ թե ադրբեջանական եւ իբրեւ թե էժան բենզինի ասեղի վրա, որի վերջն արագ մահն է՝ Հայաստանի պետականության:

Փաշինյանի մոտ էկոնոմիկայի նախարար աշխատող Գեւորգ Պապոյանը չի մեկնաբանում Ադրբեջանից շաքարավազ ներկրելու մասին «Հրապարակի» գրածը տեղեկությունը. «Էս փուլում չեմ կարող մեկնաբանել դա»: Մինչդեռ, ըստ փաշինյանական իշխանության տրամաբանության, իրենք պետք է հպարտանային նման տեղեկությամբ, դա ներկայացնեին որպես «խաղաղության դարաշրջանի» հերթական ձեռքբերում: Բայց շնորհիվ հանրային ճնշման, Նիկոլ Փաշինյանը եւ անգամ Գեւորգ Պապոյանն են հասկացել, որ Ադրբեջանից ինչ-որ ապրանք, հեթական խմբաքանակ ներկրելը ոչ թե հաջողության, այլ Ադրբեջանի առեւտրային կցորդի վերածվելու մասին ապացույց է: «Տեսեք, թե ինչ է տեղի ունեցել. մենք ցանկեր ենք փոխանակել, ասել ենք՝ մենք սա ենք արտահանում, դուք սա ներմուծում եք, ոնց որ թե մեր արտահանման եւ ձեր ներմուծման մեջ կա նույնություն: Իրենք էլ նայել են, ասել են՝ ճիշտ եք, տվել են իրենց գործարարներին: Նույնը իրենք են արտահանում, մենք ենք ներմուծում: Հիմա մեկ ապրանքատեսակ գիտեք՝ բենզինը»,- խոր հոգոց հանելով՝ ասում է Պապոյանը եւ նոր ու ավելորդ հարցերից խուսափելու համար շատ հրատապ հեռանում:

Ադրբեջանը չի ցանկանում եւ կարիք չունի Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների հաստատման, բենզինն ընդամենը նախընտրական նվեր կամ աջակցություն է Փաշինյանի իշխանությանը՝ քարոզչություն իրականացնելու համար: Փաշինյանի նախընտրական քարոզչության տնտեսական մասը հիմնված է այն թեզի վրա, որ եթե իրենք Հայաստանը ենթարկեցնում են Թուրքիային եւ Ադրբեջանին՝ «խաղաղության դարաշրջան» բերում, բացվում են Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ սահմանները, այդ երկրների հետ առեւտուր է իրականացվում, դրա արդյունքում Հայաստանում ապրանքների գներն էականորեն նվազում են, մարդկանց կյանքը բարելավվում է: Բայց որպեսզի այս քարոզչությունը մերկապարանոց չհնչի, պետք է ցայտուն օրինակ՝ բենզինը. մինչեւ Ադրբեջանից բենզին ներմուծելն այն արժեր 520 դրամ, իսկ Ադրբեջանից ներմուծելուց հետո դարձել է 430, փոփոխությունն ակնհայտ է եւ տեսանելի: Բայց որ սա նախընտրական տրյուկ է եւ կվերջանա հենց ընտրության հաջորդ օրը, ցույց են տալիս նույն բենզինի շուկան եւ գինը, ռեգուլար տեսակի բենզինը, որ մինչեւ ադրբեջանական բենզինի մուտքն արժեր 500 դրամ, հիմա արժե 470: Նման բան ուղղակի չի կարող լինել, չի կարող ավելի բարձր օկտանային արժեք ունեցող բենզինն անհամեմատ էժան լինել ավելի ցածր օկտանային արժեք ունեցողից, բացի Հայաստանից, ոչ մի ուրիշ տեղ չկա նման բան: Սա ընդամենը մի բանի ապացույց է. Հայաստանի իշխանությունն Ադրբեջանից աջակցություն է խնդրել՝ սեփական հասարակությանը խաբելու համար, եւ այդ աջակցությունը մեծահոգաբար տրամադրվել է: Ալիեւի իշխանությանը եւս ձեռնտու է Փաշինյանի վերարտադրությունը, նա օգնության ձեռք է մեկնել:

Փաշինյանը, ըստ էության, ուրիշ բան չի էլ կարող ասել հասարակությանը, չի կարող խոստանալ ներդրումներ, նոր ձեռնարկությունների ստեղծում, նոր աշխատատեղեր, դրա համար են ՔՊ-ականները սարսափում, երբ իրենց քաղաքական հակառակորդները հասարակությանը Հայաստանի տնտեսական զարգացման իրական այլընտրանք են առաջարկում՝ նոր ձեռնարկությունների եւ հարյուր հազարավոր աշխատատեղերի ստեղծման տեսքով: Չեն կարող ոչ միայն այն պատճառով, որ արդեն ութ տարի իշխանության լինելով՝ ոչ մի էական արտադրություն երկրում չի ստեղծվել, ոչ մի նոր գործարան չի կառուցվել, տնտեսության որեւէ ճյուղ չի զարգացել, բացառությամբ խաղային բիզնեսը, այլ որովհետեւ իրենց կառավարության գործունեությունն ուղղված է գործարարության եւ բիզնեսի դեմ: Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղը բանկային ոլորտն է, այսպես կոչված, ֆինանսական ծառայությունները, ամենաեկամտաբեր ոլորտը, ամենաշահութաբերը, որով Փաշինյանն ուրախանում եւ հպարտանում է, մինչդեռ դրանից պետք է ամաչեր: Բանկային ոլորտը քաշում է ամբողջ տնտեսության մեջ եղած փողը, բարձր տոկոսադրույքները, անվերահսկելի գործունեությունը, ամեն ինչից փող սարքելու, ամեն առիթով քաղաքացու գրպանը մտնելու հնարավորությունը բանկային ոլորտը դարձրել է ոչ թե տնտեսության շարժիչ ուժ: Էն, որ ասում են՝ փողն ու բանկերը երկրի արյունատար անոթներն ու արյունն են, մի հսկայական չարորակ ուռուցք է՝ իր մետաստազներով, որ ուտում է այն ամենը, ինչ ստեղծվում է երկրում, ինքը մեծանում եւ ուժեղանում է, երկրի տնտեսությունը ոչնչանում եւ մեռնում:

Առաջիկա ընտրությունները նաեւ տնտեսական մոդելների ընտրություն են կամ առաջին հերթին երկրի զարգացման տնտեսական հեռանկարի ընտրություն. ինչպիսի՞ն պետք է լինի Հայաստանը՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի համար, սեփական ապրանքների մատակարարման եւ իրացման շուկա՞, թե՞ զարգացած արդյունաբերություն եւ գյուղատնտեսություն ունեցող երկիր:

Գեւորգ Պապոյանն իզուր է սպասում, որ Ադրբեջանը պետք է քննարկի եւ թույլ տա, որ իրենց գործարարները սկսեն Հայաստանից ինչ-որ ապրանքներ ներկրել, այն ապրանքները, որոնք հիմա նրանք ներմուծում են այլ երկրներից, ներմուծեն Հայաստանից: Ադրբեջանի քաղաքականությունն ինչպես նախորդ 35 տարիներին, այնպես էլ հիմա շարունակում է մնալ նույնը՝ Հայաստանի տնտեսական մեկուսացման միջոցով հասնել թուլացմանը եւ ոչնչացմանը, ուղղակի մի քիչ բենզին են տվել, մասամբ էլ երկաթգիծն են բացել՝ իրենց օգնելու համար, համարելով, որ իրենք լավագույն գործընկերն են՝ այդ գործը համատեղ ուժերով իրագործելու համար: Պապոյանը երեւի ինքն էլ է գլխի ընկնում, թե ինչն ինչոց է, բայց դրանից միայն ուրախ է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՅՍ ԱՆԳԱՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԾՈՒՂԱԿ Է

Ժողովուրդը, որին մի անգամ հավատացրել են, թե ինքը հեղափոխություն է արել ու դարձել երկրի տերը, որ դրանից հետո կարող է անել ամեն ինչ՝ ոտքով բացել պաշտոնյաների դռները, ստիպել, որ պաշտոնյաները ծառայեն իրեն, որ ինքն այլեւս ամբողջ կազմով վարչապետ է եւ այլն, չի կարող հանդուրժել իր ընտրած ղեկավարին, եթե այդ ղեկավարը, գալով իշխանության, սեփականաշնորհում է այդ նույն ժողովրդի սահմանադրությունը, իրեն հռչակում օրենքներից վեր, իրավապահ համակարգը դարձնում իր դաստակերտը, թքում աջուձախ, այդ թվում՝ եւ ժողովրդի վրա: Իսկ եթե այդ ղեկավարը նաեւ ստախոս է, մանիպուլյանտ, հողատու եւ այլադավան, ժողովրդին այլեւս ոչինչ չի մնում անելու, քան կասեցնել նրա գործունեությունը: Կարծում եմ՝ շատ սովորական մի բան ասացի, որ հասկանալի է մեր հանրության յուրաքանչյուր անդամի՝ պետք է վերջ տալ այս խայտառակությանը, այլապես այս խայտառակությունն սպառնում է վերջ տալ մեզ՝ իրեն այդ դիրքին հասցնողներիս: Նա՝ այդ ղեկավարը, պետք է հեռանա, եւ չկա որեւէ պատճառ, որ մեզ ստիպի երկմտել: Հենց ինքը տեղ չի թողել երկմտելու:

Գոյություն ունի նման ղեկավարից ազատվելու երկու տարբերակ, երկուսն էլ՝ օրենքով եւ երկուսն էլ՝ ընդունելի: Առաջին՝ վիրահատական միջամտություն եւ երկրորդ՝ ընտրություններ: Որքան հասկանում եմ՝ մենք ավելի շատ հակված ենք երկրորդ տարբերակին: Այդ մասին է խոսում մեր հասարակական-քաղաքական ուժերի տրամադրվածությունը, ինչպես նաեւ՝ հանրության մի հատվածի հանդարտությունը, որի ականջներում դեռ հնչում է Հայաստանում ընտրակեղծիքների էջը փակված լինելու մասին բլթոցը: Բայց ասեմ՝ ընտրություններով շատ դժվար է լինելու հեռացնել մեկին, որը, ինչպես վերեւում ասացի, սեփականաշնորհել է սահմանադրությունը, օրենքները, իրավապահ համակարգը, կառավարությունն ու կառավարական բոլոր լծակները: Ամենայն հարգանքով Ռոբերտ Քոչարյանի եւ խոշոր դաշինքներով ընտրությունների գնալու պատրաստ մյուս քաղաքական ուժերի հանդեպ՝ պիտի ասեմ, սակայն, որ ուզուրպատոր ղեկավարը (մանավանդ՝ դրսի աջակցությունն ունեցող) ի զորու է հաղթահարել ընտրական յուրաքանչյուր դժվարություն, այդ թվում եւ 100 տոկոսանոց պարտությունները: Եթե կարճ՝ առաջիկա ԱԺ ընտրությունները ծուղակ են: Դուք ուղղակի տեսեք, թե ինչ թեթեւությամբ է գործող իշխանությունը պատրաստվում դրանց, ինչպես են ցուցակ կազմում, ում են մտցնում ցուցակ, ում են մերժում, ում են նշանակում շտաբի պետ ու տեղակալ: Դուք պարզապես հետեւեք սրանց նախընտրական պահվածքին: Ո՞վ իրեն թույլ կտար նախընտրական տարում հարձակվել մի կառույցի վրա, որ մեր ժողովրդի միասնության միակ առանցքն է, ո՞վ կբանդեր Ծիծեռնակաբերդի հուշարձանն ու դրա ֆոնին կապիկություններ կաներ դիսկոտեկներում, ո՞վ կծիծաղեր թոշակառուների վրա… Մենաշնորհների այսպիսի ծաղկում դուք ե՞րբ էիք տեսել, ուժային կառույցներում այս բոյի կոռուպցիա ե՞րբ է եղել: Եվ դուք կարծում եք, որ սրանք ընտրություններում անհաջողության մատնվելու սինդրոմո՞վ են տառապում… Կջարդեն, կփշրեն, կկեղծեն, կնկարեն… Ի վերջո, մի այնպիսի բան կանեն, որ չեղարկեն ընտրությունների արդյունքները:

Առաջարկում եմ՝ ավելի շատ կենտրոնանալ վիրահատության տարբերակի վրա: Ժամանակակից աշխարհում ստերիլ վիրահատության օրինակներ շատ կան: Հեռուն չգնանք: Այդպիսի վիրահատության տիպիկ օրինակ է 2018թ. թավշյա խեղկատակությունը, որ, չնայած հիմարություն լինելուն, հանգեցրեց իշխանափոխության: Ասել, որ այն ժամանակ իշխանությունն ուժային լծակներ չուներ եւ չկարողացավ «հավաքել» Գյումրուց Երեւան եկող թափառախմբին, մեղմ ասած, ճիշտ չի լինի, մինչդեռ իշխանափոխությունը, այդուհանդերձ, տեղի ունեցավ եւ այսօր իրողություն է: Ես չեմ ասում՝ գնանք, Գյումրիից գանք: Բավական է 3-4 խոշոր բլոկներով Երեւանում կանգնել ու պահանջել մեկ բան՝ ուզուրպատորի հրաժարականը: Կարող եք ասել՝ մենք այդ ճանապարհն անցել ենք եւ չենք հաջողել: Համաձայն չեմ: Մենք այդ ճանապարհի փորձը, այո, ունենք: Այսօր ուղղակի պետք է միասնաբար կանգնենք այդ ճանապարհին եւ քաղաքական ուժերից էլ չպահանջենք, որ նոր վարչապետի անուն ասեն կամ կառավարության նոր կազմը հրապարակեն: Սա պառակտման տանող պահանջ է: Միավորող պահանջը մեկը պետք է լինի՝ ուզուրպատորի հրաժարականը:

ՀԳ. *Չէ-չէ մի՝ վարչաբենդ…*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՄԻՄՎԱԼ

Թուրք-ադրբեջանական օրակարգն ամեն գնով սպասարկող, Հայաստանն ու հայությանը նվաստացնող, գոյաբանական հարվածներ հասցրած Նիկոլ Փաշինյանի ու նրա գլխավորած ռեժիմի ամեն քայլին ու հայտարարություններին ուշի-ուշով հետեւում են Բաքվից, եւ Ադրբեջանի մերձիշխանական մամուլը հաճախ է գովեստի խոսքեր հղում կամ, դպրոցական լեզվով ասած՝ «տնային ինչ-ինչ առաջադրանքների համար 5 նշանակում»

ԱՍՈՒՄ Է՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄ ՉԻ ԼԻՆԻ, ԷԼԻ ՄՈՒՆՆԱԹ ԵՆ ԳԱԼԻՍ ԲԱՔՎԻՑ

Արա ԱԼՈՅԱՆ

նույն ՔՊ-ական խմբակին՝ Փաշինյանի գլխավորությամբ: Սա դարձել է սովորական ռեժիմ՝ Փաշինյանի եւ Ալիեւի գործող ռեժիմների միջեւ:

Բայց պատահում է նաեւ, որ Ադրբեջանին դուր չեն գալիս իրենց «սրտի ՀՀ վարչապետի» հայտարարությունները: «Փաշինյանն անցնում է ռեւանշի ռեժիմի» վերտառությամբ հոդվածում ադրբեջանական «Մինվալն» օրերս հիշեցնում էր ՀՀ կառավարության ղեկավարի շնորհավորական ուղերձը՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման 34-րդ տարեդարձի առթիվ: Հոդվածագիրը մասնավորապես ընդգծում է ուղերձի այն հատվածը, որտեղ Փաշինյանը վստահեցնում է, որ Ադրբեջանի հետ «պատերազմ չի լինի. Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ խաղաղություն է հաստատվել, եւ չկա անվտանգության ավելի հուսալի երաշխիք, քան խաղաղությունն է»: Հոդվածում հիշատակվում է նաեւ ուղերձի այն հատվածը, որում Փաշինյանը խոսում է բանակի ուժեղացման մասին՝ նշելով, որ «ուժեղ բանակ չունեցող երկիրը խոցելի է եւ կարող է դառնալ ագրեսիայի թիրախ»:

Բայց պարզվում է, որ Բաքվում «հալած յուղի պես չեն ընդունել» նրա խեղճացած «խաղաղասիրական» տեքստը եւ որոշել են հերթական անգամ «դասեր տալ» կամ նոր «դաս հանձնարարել»: Իշխանական քարոզչակայքը հատկապես ուշադրություն է հրավիրել Փաշինյանի շնորհավորական ուղերձի ոչ տոնական այս հատվածի վրա, որտեղ նա հերթական անգամ մեղադրում է Ռուսաստանին, ՀԱՊԿ-ին եւ կազմակերպության անդամ գործընկերներին: «...Իսկ ՀԱՊԿ գործընկերները 2022 թվականի սեպտեմբերի դրությամբ հրաժարվում էին կատարել ՀՀ անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը երաշխավորելու մեր նկատմամբ ունեցած պայմանագրային պարտավորությունները: Հրաժարվում էին նաեւ մատակարարել հարյուր միլիոնավոր դոլարի սպառազինություն եւ տեխնիկա, ինչի համար վճարումները Հայաստանի Հանրապետությունն արդեն կատարել էր: ...Սա գոյաբանական սպառնալիք էր Հայաստանի Հանրապետության համար, եւ ակնհայտ էր, որ մեր պետականությունը վերացնելու, մեր ինքնիշխանությունը զրոյացնելու որոշում է կայացված»: Այնուհետ հոդվածում առանձնացվում է նաեւ Փաշինյանի մեկ այլ պնդում. «Այս օրհասական վտանգը հաղթահարվեց երկու վճռական իրադարձության արդյունքում. 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում քառակողմ ֆորմատով ձեռք բերված քաղաքական պայմանավորվածության, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունն ու Ադրբեջանի Հանրապետությունը միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը ճանաչում են 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա եւ ՀԱՊԿ-ում ՀՀ անդամակցությունը սառեցնելու»:

«Իհարկե, չի կարելի վիճել այն փաստի հետ, որ խաղաղությունը անվտանգության լավագույն երաշխիքն է: Բայց մնացածը... մի կողմ թողնելով հեգնական հարցերը, պետք է հասկանանք, որ Հայաստանի վարչապետը ստիպված եղավ ընդունել խաղաղության օրակարգը՝ նախ 44-օրյա պատերազմում, ապա՝ սահմանային մի շարք բախումներում եւ, վերջապես, 2023 թվականի սեպտեմբերին հակաահաբեկչական գործողություններում պարտվելուց հետո: Գուցե դեռ վաղ է կանխատեսել, թե ինչպես կփոխվի Հայաստանի քաղաքականությունը, երբ նրանք բավականաչափ «ուժեղացնեն իրենց բանակը»: Իսկ «բանակի հզորացումը» շատ դժվար կլինի: Երեւանն օգնություն է ակնկալում Եվրամիությունից, բայց 20 միլիոն եվրո արժողությամբ բժշկական վրանները դժվար թե տարբերություն ստեղծեն: Երեւանը, ըստ երեւույթին, բանակցություններ է վարում Հնդկաստանից զենքի մատակարարման շուրջ: Վերջապես, Ֆրանսիայից զենքի նվիրատվությունների մեծ ակնկալիքը հիասթափություն ապրեց. զենքը, կարծես թե, ժամանել է, բայց միայն՝ չնչին քանակությամբ: Եկեք ուշադրություն դարձնենք եւս մեկ բանի: Նախ, Փաշինյանը խոսում է պաշտպանության մասին, բայց Հայաստանը փորձում է հարձակողական զենք գնել համաշխարհային շուկայում, ինչը, մեղմ ասած, ուշագրավ է: Ավելին, հիշեցնենք. Հայաստանն ընդամենը մի քանի ամիս անց խախտեց Պրահայում ստորագրված համաձայնագրերը, երբ կազմակերպեց «նախագահական ընտրություններ Լեռնային Ղարաբաղում», եւ Նիկոլ Փաշինյանն անձամբ շնորհավորեց ԼՂ ղեկավարությանը՝ «Արցախի անկախության օրվա» կապակցությամբ»,- գրում է «Մինվալը»՝ իր զառանցագին տեքստը համեմելով հին մեղադրանքներով, թե Հայաստանը «շարունակել է զորք պահել եւ զինել Արցախի բանակը»:

Հոդվածագիրը տարակուսած հարց է բարձրացնում եւ հեգնում, թե ինչու «Նիկոլ Վովաեւիչը հանկարծ որոշեց վերակենդանացնել ՀԱՊԿ դաշնակիցների, այսինքն՝ Ռուսաստանի կողմից Հայաստանի տարածքային ամբողջականությունը երաշխավորելու առասպելական «հրաժարման» մասին հին խոսակցությունները»: Հայաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ ոչ ոք ոտնձգություն չի կատարել: Եթե Փաշինյանը նույնիսկ այսօր, ընթացող խաղաղության գործընթացի պայմաններում, սա անվանում է «սպառնալիք Հայաստանի ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը», ապա ինչպե՞ս պետք է սա հասկանալ: Որպես խաղաղության օրակարգին նվիրվածությո՞ւն: Լո՞ւրջ»:

«Եվս մեկ կարեւոր մանրուք. Փաշինյանը հիշատակեց Պրահայում խախտված պայմանավորվածությունները, բայց ոչ Վաշինգտոնում ձեռք բերված պայմանավորվածությունները, որն ինքնին դժվար թե պատահականություն լինի: Այսպիսով, արժե բարձրացնել այն հարցը, թե որքանով անկեղծորեն է այսօր Հայաստանը հետապնդում խաղաղության օրակարգը»,- եզրափակում է հոդվածագիրը՝ անուղղակիորեն Փաշինյանին փոխանցելով Ադրբեջանի հին ու նոր մեղադրանքներն ու սպառնալիքները:

Թե ինչպես կարձագանքի Փաշինյանը Բաքվի նոր «մունաթին», դժվար չէ ենթադրել՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր նման մեսիջից հետո նա ավելի ու ավելի մոլեգնաբար է «սեր խոստովանում» ալիեւյան ռեժիմին, որն իր բնականոն ռեժիմի կարեւոր մասն է դարձրել...

ԶՐՈ ԿՈՊԵԿ ՉՈՒՆԻ ՏԱԼՈՒ

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հրազդանի նախկին քաղաքապետ, ՀՀԿ-ական Արամ Դանիելյանի դատավարությունը դեռ շարունակվում է: Նրան մեղադրում են 2015-2018 թվականների ընթացքում համայնքապետարանի հողի հարկի եւ գույքահարկի գումարներից առանձնապես խոշոր չափերի յուրացումներ եւ վատնումներ կատարելու համար: Հետաքրքիրն այն է, որ քրեական գործը, որի շրջանակներում ձերբակալվել է Դանիելյանը, մի քանի անգամ կարճվել է, այնուհետեւ՝ վերաբացվել: Մեկ այլ քրեական գործով էլ Գլխավոր դատախազությունը Հրազդանի նախկին քաղաքապետ Արամ Դանիելյանից պահանջում է 12 անշարժ գույք եւ 116 միլիոն դրամ, 1 տրանսպորտային միջոց եւ 1 իրավաբանական անձում մասնակցության իրավունք:

2015-2018 թվականների ընթացքում համայնքապետարանի հողի հարկի եւ գույքահարկի գումարներից առանձնապես խոշոր չափերի յուրացումներ եւ վատնումներ կատարելու համար դատարանում փորձագետների ներկայացրած եզրակացության հետ Արամ Դանիելյանի ներկայացուցիչ՝ փաստաբան **Ալեքսանդր Սիրունյանը** համամիտ չէ, այդ իսկ պատճառով դատարանից պահանջել է նշանակել լրացուցիչ փորձաքննություն, սակայն դատարանը մերժել է. «Փորձագետին հրավիրեցինք դատարան, հարցաքննեցինք, հարցրի՝ եղբայր, դու հաշվել ես 2015-18 թթ. պակաս գումարը եւ 2019 թվականին հաշվարկն ավարտել: Հարց առաջին. դու կանխիկ գումարնե՞րն ես հաշվել, թե՞ նաեւ փոխանցումով քաղաքապետարանի հաշվին մուծած փողերը: Ասաց, որ բանկը չի հաշվել: Այստեղ մենք տեսնում ենք, որ տարբերություն կտա թվերի մեջ: 2-րդը. 2018 թվականին Հրազդանում եղել է 3 քաղաքապետ: Արամ Դանիելյանը պաշտոնավարել է մինչեւ հուլիսի 1-ը: 2018 թվականին չարաշահումները գուցե մյուս 2 քաղաքապետի օրո՞ք են եղել, ոչ թե Դանիելյանի, ասաց՝ դա չեմ կարող ասել: Դա է պատճառը, որ դատարանին խնդրեցինք՝ լրացուցիչ փորձաքննություն լինի, որ հաշվարկի մեջ ընդգրկենք, որը ինքը չի հաշվել, ու մեկ էլ հասկանանք, թե 2018 թվականին չարաշահումները որ քաղաքապետի օրոք են եղել: Մեր ասածը սա էր, դատարանը մերժեց: Իհարկե, իր ուզելով չի, էդպես չի, որ այսպես թողնելու ենք, ընդ որում մերժեց՝ օրենքը կոպիտ խախտելով: Դրա մասին չեմ ուզում բարձրաձայնել, քանի որ առաջին ատյանով կյանքը չի վերջանում: Դանիելյանի գործը քանի որ քննվում է հին քրեադատավարության օրենսգրքով, փորձաքննության հարցը որոշելիս դատարանը պետք է հեռանա խորհրդակցական սենյակ, եւ կայացվելիք որոշումը պետք է լինի գրավոր, իսկ ինքը որոշեց, որ ոտի վրա լինի, լսեց, ասեց՝ մերժում եմ: Ես էլ ասացի՝ դրա իրավունքը չունեք: Դատավորն ասաց, որ որոշումը կայացրել եմ, ասացի՝ միեւնույն է՝ չունեք, բնականաբար, շարունակելու ենք պայքարել»:

Սիրունյանին հարցրինք՝ 7 տարի ընթացող դատավարության արդյունքում Արամ Դանիելյանից կամ իր հետ փոխկապակցված անձանցից քանի՞ գույք է վերադարձվել պետությանը: «Զրո կոպեկ, զրո կոպեկ չունի տալու: Դրանք «Հետքի» հոդվածը կազմակերպել էին, որ Ծաղկաձորում եղել են ապօրինի աճուրդներ, կոպեկներով հողեր են առել, եւ ամենաբարձր մակարդակով զեկուցել են, որ բան ենք գտել: Դա իրականում Ծաղկաձորում չի, Հանքավանի վերնամասում ա: Եկան, էդ դատն իրենց արեւին կրեցին, տարան պատմեցին ում որ պետք էր, թե՝ Ծաղկաձորում Հրազդանի քաղաքապետ Դանիելյան Արամի դեմ դատ ենք կրել, ապօրինաբար սեփականաշնորհված հող ենք հետ բերել: Այդ հողը վաղուց Արամինը չի, դա վաղուց վաճառել էր»:

Հիշեցնենք, որ Արամ Դանիելյանին ձերբակալել էին 2019-ի փետրվարի 26-ին՝ պաշտոնավարման տարիներին՝ 2015-2018թթ. ընթացքում, համայնքապետարանի աշխատակազմի հողի հարկի եւ գույքահարկի գումարներից առանձնապես խոշոր չափերի յուրացումներ եւ վատնումներ կատարելու կասկածանքով, նրա նկատմամբ քրեական գործ էր հարուցվել դեռ 2018-ի սեպտեմբերին: Նույն տարվա մարտի 1-ին տեղեկացանք, որ նրան ազատ են արձակել, երբ վճարել է համայնքին պատճառած վնասի մի մասը՝ 102 մլն դրամ:

Շարունակության արժանի նախաձեռնություն

Բոլորովին վերջերս իմ վաղեմի բարեկամ՝ Երեւանի «Վան Արյան» հրատարակչության տնօրեն, լոռեցի Վիլյամ Պողոսյանն անակնկալ արեց՝ նվիրելով 2023թ. իր ղեկավարած հրատարակչության կողմից հրատարակված Էդվարդ Միլիտոնյանի կազմած «Գրական տեղեկատուն»: Տուն հասնելուն պես սկսեցի թերթել այն: Գիրքը սեղանին բաց էր մնացել լրագրող-հրապարակախոս, մի շարք ուշագրավ վավերագրական ֆիլմերի հեղինակ, ՀՀ սահմանադրական դատարանի նախկին մամուլի քարտուղար Հովհաննես Պապիկյանին ներկայացնող 234-րդ էջով: Կարոտ եւ ափսոսանք խառնվեցին հոգուս մեջ, քանզի նա արդեն երեւելիների հավերժության սուրբ համաստեղությունում է: Նրա շատ գրքեր զարդարում են իմ անձնական գրադարանի մի անկյունը: Մտքով ետ գնացի 2015թ., երբ պարտավորեցնող ընծայագրով Պապիկյանից ստացել եմ Վազգեն Ա Վեհափառին նվիրված «Ոգու հերկը» աշխատությունը: Այդ աշխատության եւ Վազգեն Առաջինի ազգանվեր գործունեության, նրա նկատմամբ համազգային հարգանքի ու վստահության ֆոնին՝ սիրտս ծանրացավ այս օրերին մեր երկրում շարունակվող հակաեկեղեցական դեպքերից:

Եվ, ով զարմանք, գիշերվա կեսին զարթնում եմ երազի մեջ՝ լուսահոգի Հովհաննես Պապիկյանն իրեն հատուկ մեղմ ժպիտով ինձ է մեկնում մի գիրք-օրացույց, ականջիս հասցնելով՝ ահա հերթականը: Քունս միանգամից կորավ, ու ժապավենի նման աչքերիս առջեւով շարժվեցին նրա եւ Շուշանիկ Սահակյանի հրատարակած «Վահան Տերյան» (երկու հրատարակություն), «Համո Սահյան», «Հովհաննես Շիրազ», «Լեւոն Միրիջանյան», «Մեր Մկրտչյան» գիրք-օրացույցները: Դրանք հոգեւոր եւ զգացմունքային դաստիարակության յուրատիպ բաղադրատոմսեր են: Այդպես էլ չիմանալով, թե երազում ինձ մեկնած երեւակայական օրացույցն ում էր նվիրված, ամենայն սիրով եւ անհամբերությամբ սկսեցի սպասել առաջին հերթին նշանավոր լոռեցիներ Հովհաննես Թումանյանի, Հրանտ Մաթեւոսյանի, Սոս Սարգսյանի, հետո նաեւ՝ Հայաստանի եւ սփյուռքի նշանավոր ներկայացուցիչների գիրք-օրացույցներին: Մինչ այդ էլ, բայց հատկապես «Կրթություն» թերթը փակելուց եւ կրթության ոլորտի ու դասագրքերի վայ բարեփոխումներից հետո ես ԿԳՄՍ նախարարության հետ հույսեր չէի կապում եւ չեմ կապում, այնուամենայնիվ կարծում եմ, որ հենց նա պիտի վերցնի իր հովանավորության գիրք-օրացույցների հրատարակման գործը: Կարծում եմ՝ կազմողների պակաս չի լինի: Համոզված եմ, որ Հովհաննես Պապիկյանի եւ Շուշանիկ Սահակյանի նախաձեռնությունը միանգամայն արժանի է շարունակության: Այդ ուշագրավ նախաձեռնության շարունակությունը ինքնուրույն կարող են ապահովել նաեւ մեր գրահրատարակիչները եւ անհատ բարեգործներ: Տեղին եմ համարում ընդգծել, որ գիրք-օրացույցներն ապահովում են պոեզիայի մասսայականությունը եւ ձեւավորում գրական վերաբերմունք դեպի գիրքն ու գրատպությունը: Հովհաննես Պապիկյանի նախաձեռնության շարունակությունը, անշուշտ, կընկալվի որպես հարգանքի տուրք նրա պայծառ հիշատակին:

Վաղարշակ ՂՈՐԽՄԱԶՅԱՆ

ՀՈՒՇԱԳՐՔ

ԼԱՎՆ ԷԼ ԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ, ՎԱՏՆ ԷԼ

«Գործն է անմահ, լա՛վ իմացեք, որ խոսվում է դարեդար, Երնե՛կ նրան, որ իր գործով կապրի անվերջ, անդադար»,- ասում էր մեծն Լոռեցին: Փորձել եմ Վանաձորի համայնապատկերից ներկայացնել եւ լավ, եւ վատ գործեր: Առաջինները՝ արժանահիշատակ, գովելի, երկրորդները՝ արատավոր, որոնց հեղինակներին ու արարքները գովաբանելը դժվար է:

ԱՐԺԱՆԱՀԻՇԱՏԱԿ ԳՈՐԾԵՐ

Հայաստանի «Ինտերկապ» բարեգործական կազմակերպության (նախագահ՝ Նորայր Զուլոյան) նախաձեռնությամբ Վանաձորում, համաժողովրդական հանգանակությամբ, հնարավոր եղավ կանգնեցնել Զորավար Անդրանիկի՝ աշխարհում առաջին բրոնզաձույլ հոյակերտ արձանը: Այն տեղադրվեց Զորավար Անդրանիկի անվան փողոցի սկզբնամասում՝ մեծ քարաբեկորի մոտ, որի վրա դեռեւս 1991 թվականին մի խումբ ՀՀՇականներ փորագրել էին. «Այստեղ կտեղադրվի Զորավար Անդրանիկի արձանը», սակայն խոստմանը տեր չէին կանգնել:

Հանգանակությանը մասնակցել է ավելի քան 200 անդրանիկասեր հայորդի: Այսօր լոռեցիները հուշակոթողի մոտ հավաքվում են Զորավարի ծննդյան ու մահվան օրերը հանդիսավորությամբ նշելու:

Վանաձորի կենտրոնական հատվածում՝ Ազատամարտիկների պուրակում եւս մեկ գովելի նախաձեռնություն կա՝ բացօթյա թանգարան, որի կողքով անցորդներն անտարբեր չեն անցնում: Այստեղ կարելի է տեսնել կժեր, ժամացույցներ, կճուճներ, սանդերք, արդուկ, ճախարակ, կարաս, սայլ, չուխա, իլիկ, տակառ, կահկարասի եւ բազմաթիվ այլ առարկաներ, որոնք մեր կենցաղի անբաժան մասն են եղել: Ցուցանմուշները շարունակ ավելանում են: Ծառուծաղկի հետ հմուտ համադրումը գեղագիտական հաճույք է պատճառում, օգնում՝ պատկերացում կազմել մեր անցյալի կյանքի ու մշակույթի մասին: Թանգարանը հատկապես հետաքրքիր է դպրոցականների համար. կողքին թիվ 11 դպրոցն է: Այս ամենի հեղինակը քաղաքը սիրող մի մարդ է՝ գեղանկարիչ Սամվել Առաքելյանը, որը նաեւ հարեւանությամբ գտնվող «Կժեր» գեղարվեստական իրերի վաճառակետի տերն է: Հեշտ չէ հավաքել, պահպանել ու խնամել այս ամբողջը, բայց մարդն անում է: Եվ ակամա մտածում ես. եթե ամեն մեկը կարողացածի չափով մի լավ բան աներ, մեր քաղաքներն իրենց դեմքը հաճելիորեն կփոխեին:

ԵՐԲ ԼԱՎ ԳՈՐԾԸ ՉԻ ՆԵՐՎՈՒՄ, ԻՍԿ ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐ ԱՄԵՆ ՏԵՂ ԿԱՆ

Ժայռի գլխին վեր խոյացած «Կիրովական» հյուրանոցից դեպի քաղաքի կենտրոն իջնող գալարապտույտ սանդուղքներն ու լճակների վրայով անցնող ճանապարհը միշտ եղել են հարմար ու գեղատեսիլ: Երբ ճանապարհը վնասվել էր, մի մտահոգ գործարար սիրով կազմակերպեց նորոգումը. ամրացվեցին բազրիքները, վերականգնվեց լուսավորությունը, ճանապարհը նոր տեսք ստացավ: Այսօր անցեք այդ ճանապարհով՝ բոլոր լամպերը ոչնչացված են, գետակն ու նրա ափերը՝ աղբի մեջ կորած:

Վանդալիզմն ամենուր է: Վանաձորի թթու ջրի հանգստյան գոտուց անհետացել են նորատունկ եղեւնիները, անհայտ չարագործները ոչնչացրել են Սուրբ Աստվածածին եկեղեցու Նահատակաց պուրակը զարդարող «բուկսուզ» կոչվող գեղազարդ թփերը: Սա սրբապղծություն է ոչ միայն Հայ առաքելական եկեղեցու, այլեւ բոլոր նահատակների հիշատակի հանդեպ, որոնց անունով ստեղծվել է պուրակը: Այստեղ հուշարձաններ են կանգնեցված 1915-ի սրբադասված նահատակների, 1937-ի բռնադատվածների, 1988 թ. երկրաշարժի զոհերի եւ ԱՍԱԼԱ-ի հերոսների հիշատակին: Պուրակը մարզի խնամված, հոգեւոր մթնոլորտ ունեցող սրբազան վայրերից է: Չենք ցանկանում երկար խոսել ապօրինի կառուցապատումների մասին: Քաղաքի տեսքն աղավաղող շինություններ ամենուր են, անգամ՝ մայթերի վրա: Սանկտ Պետերբուրգի լայնահուն խճուղու մայթին կարելի է տեսնել «Լվա ինքդ» մակագրությամբ ավտոլվացման կետ, կիսավեր խանութներ, ցանկապատեր: Քաղաքի իշխանություններից ոչ մի արձագանք: Վանաձորցիներն էլ, իհարկե, պակաս մեղավոր չեն:

Քաղաքը եզերող անտառը, որը խավարի ու ցրտի տարիների համատարած սպանդից հետո հազիվ է վերականգնվում, ոմանց համար կրկին դարձել է վառելափայտի պահեստարան: Մի փոքր հատվածում նկատվում են անխնա հատված բազմաթիվ ծառերի կոճղեր: Երիտասարդ անտառապետն ասում է. «Տեսել եմ, կնիքել եմ»: Բայց «կնիքով», թե առանց «կնիքի» հատված ծառերը չեն վերակենդանանում: Այս ամենի ծանր հետեւանքն արդեն մեկ անգամ ապրել ենք: 1988-ի աղետից հետո, երբ անտառը հնձվում էր չոր խոտի պես, մի գիշեր տեղատարափ անձրեւը հեղեղի վերածվեց: Միլիցիայի կապիտան Շոթա Մովսիսյանի ընտանիքը հրաշքով փրկվեց, բայց զրկվեց տնից ու այգուց: Հեղեղվեցին տներ, բակեր, օժանդակ շինություններ, փողոցներ, ընտանի կենդանիների կորուստներ եղան: Բացակայող անտառն այլեւս չէր կարող կլանել ջուրը:

Լավ ու վատ գործերի օրինակներ կարելի է բերել ոչ միայն Վանաձորից՝ դրանք կան բոլոր համայնքներում: Համոզված եմ, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտք ունի իր հարազատ ոստանի առաջ: Եղեք քաղաքացիներ, ոչ թե քաղաքի բնակիչներ:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՆՐԱՆ ԿԱՐԴՈՒՄ ՈՒ ԴԻՏՈՒՄ ԵՆ ՊԱՊԵՐՆ ՈՒ ԱՅԱԹՈԼԼԱՆԵՐԸ

Ռուս դասական գրականության այս հեղինակին կարդացել են հանգուցյալ Ֆրանցիսկոս պապն ու Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլա Ալի Խամենեին: Նա ռուսական ինքնության ճանաչման հենասյուներից մեկն է, հանրագիտարանային հեղինակ: Խոսքը Ֆյոդոր Դոստոեւսկու մասին է: Նրա գործերը բավականին շատ էկրանավորվել են, բեմադրվել:

Դեռեւս 1909-ին առաջին անգամ արվել ֆիլմ են նկարել Դոստոեւսկու «Ոճիր եւ պատիժ» գործի հիման վրա՝ Գերմանիայում: 1910-ին «Ապուշի» հիման վրա Ռուսաստանում 15 րոպեանոց ֆիլմ է նկարահանվել: 1915-ին Ռուսաստանում էկրանավորվում է «Կարամազով եղբայրները»՝ 15 րոպեանոց ժապավենով: Հաջորդիվ Յակով Պրոտազանովի «Նիկոլայ Ստավրոգինն» էր՝ «Դեւերը» վեպի մոտիվներով: Ցարական Ռուսաստանի կործանումն ու դրան հետեւած խորհրդային կարգերի հաստատումը Դոստոեւսկուն որոշ ժամանակով «մղում են երկրորդ պլան», բոլշեւիկյան գաղափարախոսության պատճառով: Սակայն ռուսական էմիգրացիայի շրջանակներում այն շարունակում է մնալ ուշադրության կենտրոնում:

Ֆրանսիայում, 1931 թվին ռուս էմիգրանտ Ֆյոդոր Օցեպն էկրանավորում է «Կարամազով եղբայրները»: 1932-ին արդեն Խորհրդային Միությունում Դոստոեւսկին, կարելի է ասել, «վերակենդանանում է», եւ Վասիլի Ֆյոդորովն էկարանավորում է «Մեռյալների տունը»: 1938-ին Ֆրանսիայում եւ ֆաշիստական Գերմանիայում էկրանավորվում է «Խաղամոլը»: Նույն վեպն Իտալիայում էկրանավորում է Ջակոմո Ջենտիլոմոն՝ 1947-ին, իսկ դրանից մեկ տարի առաջ, Դոստոեւսկու ֆրանսիական էկրանավորումներից մեկում իշխան Միշկինի դերում հանդես է գալիս Ժերար Ֆիլիպը: 20-րդ դարի 50-ական թվականներին եւս ռուս դասականին չեն մոռանում: Ճապոնացի Ամիմա Կուրոսավան նկարահանում է «Ապուշը»՝ ըստ համանուն վեպի, իսկ 57-ին իտալացի Լուկինո Վիսկոնտին նկարահանում է «Սպիտակ գիշերներ» վիպակի հիման վրա կինոնկար, որտեղ գործողությունները տեղափոխվել էին իր ժամանակի իրականություն: 58-ին ամերիկացի ռեժիսոր Ռիչարդ Բրուքսը «Կարամազով եղբայրները» վերածում է քրեական մարտաֆիլմի՝ հեփի-էնդով:

50-ականների կեսերին Դոստոեւսկին վերստին վերադառնում է խորհրդային մշակույթ՝ խորհրդային ընկալումների ադապտացիայով: Ի հայտ է գալիս արդեն խորհրդային «Ապուշը»՝ Յուրի Յակովլեւի գլխավոր դերակատարմամբ: Ռեժիսորն էր Իվան Պիրյեւը: 59-ին նույն ռեժիսորը նկարահանում է «Սպիտակ գիշերները»: 60-ականների վերջին նա սկսում է «Կարամազով եղբայրների» խորհրդային տարբերակի նկարահանումները, սակայն նրա վաղաժամ մահն աշխատանքը թողնում է կիսատ, եւ այն ավարտում են Կիրիլ Լավրովն ու Միխայիլ Ուլյանովը: 60-ականներին եւ հաջորդ տասնամյակներին, մինչեւ խորհրդային կայսրության փլուզումը, Դոստոեւսկուն անդրադարձել են Կոնստանտին Վոինովը, Լեւ Կուլիջանովը, Եվգենի Տաշկովը, Անջեյ Վայդան եւ այլք:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԵԿԵՂԵՑԻՆ, ԱՅՈ, ԻՆՔՆԱՄԱՔՐՎԵԼՈՒ Է

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Ամուլից մի տեսանյութի վերնագիր ընկավ աչքովս. «Մենք ոչ ոքի չենք տեսնում կաթողիկոսի դերում, պետք էլ չի, որ տեսնենք, եկեղեցին՝ ինքը կմաքրվի»: Խոսողը երիտասարդ ՔՊ-ական պատգամավոր Պողոսյան Մարիամն էր: Նայեցի տեսանյութը. այն բավական կարճ էր, ընդամենը 6.5 րոպե: Հետո ԱԺ կայքում կարդացի վերջինիս կենսագրությունը: Պարզվեց, որ բավական երիտասարդ է, մարդ, որ նոր-նոր է ակտիվ կյանք մտել եւ գործավարից ու օգնականից անմիջապես վերածվել է պատգամավորի: Չնայած դա էլ է բնական՝ աննորմալ մեր իրականությունում, քանի որ 2018-ից այս կողմ այն ծուռ հայելիների թագավորություն է դարձել, ապա հենց նման անձինք էլ պետք է հավաքագրված լինեն ՔՊ-ում, դատարաններում կամ այլ պետական կառույցներում: Ասեմ, որ անձամբ տիկնոջ դեմ ոչինչ չունեմ՝ նրան չեմ ճանաչում, բայց նորմալ պայմաններում երիտասարդ տարիքում մարդիկ լինում են հեղափոխական եւ ոչ թե իշխանական: Օրինակ՝ 1960-ականների երիտասարդական խռովություններն Արեւմուտքում ու հիպպիական շարժումը: Հետաքրքրության համար համացանցը գուգլելիս բացահայտեցի, որ այդ շրջանակում «հիպպիների արքա» տիտղոսը կրել է «ութմատանի Էդդի» անունով ամերիկահայ Երդվարդ Մազմանյանը, որը 2010-ին 85 տարեկանում մահացել է Հնդկաստանում:

Վերադառնանք ՔՊ-ական տիկնոջը. վերջինիս խոսքը, իհարկե, չէր համապատասխանում Եկեղեցու առումով նրա վերադասի պատկերացումներին: Վերադաս ասելով նկատի չունեմ ԱԺ նախագահի պաշտոնը զբաղեցնող Ալենին, որովհետեւ նա չէր Պողոսյան Մարիամին սկզբում նշանակել «Իմ քայլը» խմբակցության գործավար, հետո՝ փորձագետ, վերջում էլ դարձրել ՔՊ-ական պատգամավոր: Դա արել էր Նիկոլ Փաշինյանը: Եվ դա էլ է ծուռ հայելիների թագավորությունից, քանի որ պատերազմում պարտվածին սովորաբար դեն են գցում եւ ոչ թե մեծարում: Իսկ եթե մնում է, ապա միայն պարտությունը հաղթանակի վերածելու նպատակով: Խոսքն իրական պարտությունն իրական հաղթանակի վերածելու մասին է եւ ոչ թե, ասենք, «Պարտությունը հաղթանակ է» կարգախոսով առաջնորդվելու. «1984» վերնագրով վեպի հեղինակ, անգլիացի Ջորջ Օրուելի հոգու ականջը կանչի, եթե, իհարկե, առկա է նման երեւույթ:

Անցնենք տիկնոջ ասածի բովանդակությանը: Դրա առաջին մասը, որ իրենք ոչ մեկին չեն տեսնում կաթողիկոսի դերում, կարող է եւ ճշմարիտ լինել: Այն առումով, որ իրենց առաջնորդը հնարավոր է դեռեւս չի պատկերացնում, թե ով կարող է փոխարինել Գարեգին Բ-ին, եթե իրեն հաջողվի հաղթել հայոց եկեղեցու դեմ նախաձեռնած պատերազմում: Թեկնածուները, իհարկե, շատ են՝ մեկ տասնյակ, իսկ եթե ամուսնացյալ քահանաներին էլ հաշվենք, ապա մի քանի տասնյակ, բայց նրանք, բարոյականության տեսակետից, շատ ավելի անընդունելի են, քան գործող կաթողիկոսը: Իսկ նիկոլական կանոնադրությունն էլ դեռեւս առկա չէ: Գումարած այն, որ դրանք՝ բոլորը, դեմ են գնացել եկեղեցական կանոններին, ուրեմն չեն կարող հեղինակություն վայելել ո՛չ Եկեղեցու ներսում եւ ո՛չ էլ դրսում: Դա, իհարկե, օգտակար հանգամանք է Եկեղեցին կառավարելու տեսակետից, սակայն կարող է խնդիրներ առաջացնել արտաքին աշխարհում: Եվ վերջապես՝ այս օրերին դավաճանում են կաթողիկոսին, վաղը կարող են դավաճանել նաեւ իրեն: Իսկ դա կարող է իր իշխանության տակ դրված դանդաղ գործողության ականի դեր կատարել:

Անցնենք տիկնոջ խոսքի երկրորդ մասին. «...պետք էլ չի, որ տեսնենք...»: Այստեղ արդեն տիկինը կամ սուտ է խոսում եւ կամ միամիտ է: «Մեծարգոն» այնքան հիմար չէ, որ իր գործադրած հսկայական ջանքերից հետո ազատություն տա հոգեւորականներին: Դա նույնն է, որ ինչ-որ մեկը սեփական այգում (հիշենք «վարչապետը մեր երկրի տերն է» սափեյանական դատողությունը), ասենք, մարիխուանա թմրանյութ ստանալու համար կանեփ ցանի, աճեցնի, իսկ հետո, օգտագործելու կամ վաճառելու փոխարեն, նվիրի որեւէ պատահական անցորդի: Կյանքում այդպես չի լինում, եւ ՔՊ-ականի վերածված երիտասարդ տիկինը պետք է որ դա գիտակցեր: Ուրեմն, ոչ միայն պետք է, որ տիկնոջ վերադասը տեսնի որեւէ մեկին կաթողիկոսի դերում, այլեւ հենց հիմա էլ վստահաբար նման անձի փնտրտուքների մեջ է:

Ավարտենք մեր վերլուծությունը: Վերջում ասում է. «... Եկեղեցին ինքը կմաքրվի»: Այստեղ արդեն հստակ երեւում է, որ տիկինը կամ իսկապես միամիտ է եւ կամ... ՔՊ-ական է: Իսկ ՔՊ-ականը, ինչպես հայտնի է քառօրյա պատերազմի հերոս Աբաջյանի կեղծ պապիկի ելույթից, տեսականորեն անգամ չի կարող չլինել կեղծիք չկրող: Եթե Նիկոլին անհրաժեշտ լիներ, որ հայոց եկեղեցին ինքնամաքրվեր, ապա դրա համար կստեղծեր անհրաժեշտ պայմաններ՝ ընթացքում աջակցելով դրան եւ ոչ թե կպատերազմեր Եկեղեցու դեմ: Իսկ այն, ինչ տեղի է ունենում այսօր, տեսնողը կամ գիտակցողը, եթե ինքն իր հետ լիներ ազնիվ, վաղուց դուրս կգար թե՛ այդ կուսակցությունից եւ թե՛ գործող իշխանությունից: Դա ասում եմ որպես մեկը, որը շուրջ երկու տասնամյակ կռիվ է տվել նախկինների դեմ, 2018-ին ողջունել է Սերժի դեմ շարժման հաղթանակը, իսկ մինչեւ տարեվերջ համոզվել է, որ ինքն ու իր երբեմնի ծանոթ Նիկոլն իրար հետ գնալու ճանապարհ չունեն: Ինչեւէ, Եկեղեցին այսօր իսկապես գտնվում է ծանր ու դաժան ինքնամաքրման գործընթացում: Ու դա տեղի է ունենում ոչ թե շնորհիվ Նիկոլի, այլ հայոց եկեղեցու դեմ նրա նախաձեռնած պատերազմի արդյունքում:

Ուղղակի ողջ խնդիրն այն է, որ տիկին Պողոսյանն ու նրա վերադասը Եկեղեցու ինքնամաքրման գործընթացը հասկանում են ՔՊ-ավարի: Այսինքն՝ ոչ այնպես, ինչպես հայրենիքի զգացողություն ունեցող անձինք: Մեր պատկերացմամբ՝ ինքնամաքրումը ենթադրում է, որ Եկեղեցուց հեռացվելու են բոլոր նրանք, ովքեր միացել են հակաեկեղեցական արշավին: Կարեւոր չէ՝ դա արել են «կոմպրոմատային» ճնշումների արդյունքո՞ւմ, թե՞ 5 միլիոնով կամ ավելի մեծ գումարով իրենց հոգին սատանային վաճառելու գնով: Ու, որքան հասկանում եմ, դրանից հետո առաջիկա 100-150 տարում հայոց եկեղեցին լինելու է ամենամաքուրը քրիստոնեական աշխարհում: Որովհետեւ եթե որեւէ հոգեւորական՝ լինի ամուսնացյալ քահանա, թե կուսակրոն եպիսկոպոս, որեւէ ոչ կանոնական վարք դրսեւորելիս կհիշի 21-րդ դարասկզբի հակաեկեղեցական արշավի պատմությունը, ինչը նրան հետ կպահի նույնը կրկնելուց:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 3.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Ընտրական Հայաստանի գործընթացներում ամենամեծ փորձությունների ենթարկվողը ո՛չ ներհայկական զարգացումներից գլուխ չհանող ընդդիմությունը եւ ո՛չ էլ աշխարհաքաղաքական զարգացումներում ճիշտ չկողմնորոշվող իշխանությունն է: Ամենամեծ փորձությունների ենթարկվողը, թերեւս, Հայաստանի Հանրապետությունն ու Հայաստան պետությունն է:

Հարցն այն է, որ ստեղծված պայմաններում ոչ թե ուրիշին, այլ հենց իրեն՝ պետությանն է վիճակված՝ ինչպես դուգիններին ու սոլովյովներին, այնպես էլ Հայաստանի որոշ ռուսամետների հասկացնել, որ Ռուսաստանի՝ Թրիփից դուրս մնալը կամ չմնալը ոչ թե Հայաստանի, այլ Ռուսաստանի խնդիրն է: Իսկ Հայաստանի խնդիրն այս առումով Հայաստանը «հակառուս» չդարձնելն ու ռուսական ներկայության եւ ներդրումների համար դռները բաց պահելն է:

Սակայն «Թրամփի ուղուց Ռուսաստանի դուրս մնալ-չմնալը ոչ թե Հայաստանի, այլ Ռուսաստանի խնդիրն է»-ն հայաստանյան ռուսամետներին բացատրելուց բացի, նաեւ Նիկոլին ու հայաստանյան արեւմտամետներին պետք է հասկացնել, որ իրենց խնդիրը ոչ թե Թրիփն «անվտանգություն երաշխավորողի» գնով Հայաստանի ու հայ ժողովրդի վրա վաճառելն է, այլ ամերիկացիներին բացատրելը, որ Թրիփը խաղաղության խոստման գնով ԱՄՆ-ին վաճառելը ոչ միայն այն ամենանվազագույն գինն է, որով Հայաստանը կարող էր վաճառել Թրիփը, այլ նաեւ այն ամենանվազագույն գինն է, որով ԱՄՆ-ն կարող էր գնել այն: Եվ, հետեւաբար, այս գործարքից հետո Հայաստանն իրավունք ունի հույս ունենալու, որ ԱՄՆ-ն, հաշվի առնելով այս հանգամանքը, Հայաստանի տնտեսության այլ ոլորտներում այնպիսի ներդրումներ կանի, որ այդ ներդրումներով Հայաստանը, գոնե որոշակի չափով, կարողանա փոխհատուցել այն ցածր գինը, որով Հայաստանը ստիպված է եղել վաճառել Թրիփը:

Այս իմաստով, չնայած նրան, որ մեզ ու մեզ նմանների համար ամենահավանական վարկածը շարունակում է ընդդիմության եւ իշխանության կողմից պետությանը մենակ թողնելու վարկածը մնալ, այնուամենայնիվ, մենք ու մեզ նմաններն ուզում ենք հավատալ, որ այս երկրի իշխանությունն ու ընդդիմությունը, ի վերջո, կգիտակցեն, որ իրենք, քանի դեռ չեն կորցրել պետությանը մենակ չթողնելու հնարավորությունը, պարտավոր են ամեն ինչ անել, որպեսզի սպասվող փոփոխությունները ոչ թե պետությանը մենակ թողնելու, այլ պետության հետ համագործակցելու տրամաբանությամբ արվեն:

Շարունակում ենք հուսալ, որ նրանք հենց այդպես էլ կվարվեն, որովհետեւ հավատում ենք, որ, ի վերջո, կգիտակցեն, որ հակառակ պարագայում կստացվի այնպես, որ Հայաստանի այսօրվա խնդիրը ոչ թե հայ-ռուսական կամ հայ-ամերիկյան հարաբերությունները, այլ հենց իրենք կլինեն:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am